- Վ եր ազ գ այ ի ն կ ու ր պ ու ր ա գ ի ան եր ի գ ու թ ռ ու և ն ե ու թ յ ան ս պ ա ս ար կ ու մ ա շ խ ա ր հ ո վ մ ե կ :
- Բ ան կ այ ի ն գ ու թ ա ռ ն ու թ յ ու և ն եր ի մ ի ջ ազ գ այ ի ն ք ն ու յ թ , ի ն չ ն ա ռ ա ջ ի ն հ եր թ ի ն հ ան դ ի ս ան ու մ Ե ա շ խ ա ր հ ո վ մ ե կ ս փ ո վ ա ծ մ ա ս ն ա ճ յ ու ղ եր ի և ն ու ր տ ե ու ե կ ա տ վ ա կ ան տ ե խ ն ո լ ո գ ի ան եր ի յ ու ր ա գ մ ան ար դ յ ու և ք :
- Մ ի ջ ազ գ այ ի ն ք ան կ ի գ ու թ ռ ու և ն ե ու թ յ ան ու և ն ի վ եր ս ա լ ա գ ու մ : Մ ի ջ ազ գ այ ի ն ք ան կ ը վ եր ա ծ վ ու մ Ե \$ ի ն ան ս ա կ ան ծ ա ռ ա յ ու թ յ ու և ն եր մ ա տ ու ց ո ղ « հ ան ր ա խ ան ու թ ի », ու ր տ ե ու հ ա ճ ա խ ու ր ո ղ կ ար ո ղ Ե ս տ ան ա լ գ ր ե թ ե ա մ ե ն տ ե ս ա կ ի \$ ի ն ան ս ա կ ան ծ ա ռ ա յ ու թ յ ու և ն :
- Մ ի ջ ազ գ այ ի ն ք ան կ ի գ ր ե թ ե ք ո լ ու ր գ ու թ ա ռ ն ու թ յ ու և ն եր ի պ ա շ տ պ ան վ ա ծ ու թ յ ան ք ար ծ ր մ ա կ ար դ ա կ :

Գ ու թ ար ք ի ի ր ակ ան ա գ մ ան եր ա շ խ ա վ ու ր ու մ ը և ք ար ծ ր ա պ ա հ ո վ ու թ յ ու և ն ա ռ ա ջ ի ն հ եր թ ի ն հ ն ար ա վ ու ր Ե դ ա ռ ն ու մ վ ս տ ա հ ե լ ի հ ա ճ ա խ ու ր ո ղ ն եր ի հ ե տ ա շ խ ա տ ե լ ու ք ա ղ ա ք ա կ ան ու թ յ ան շ ն ու ր հ ի վ , ի ն չ պ ե ս ն ան մ ա ս ն ա ճ յ ու ղ եր ի ը ն տր ու թ յ ան և ար տ ա ս ա հ մ ան յ ան գ ու թ ա ռ ն ու թ յ ու և ն եր կ ա տ ար ե լ ի ս « վ ս տ ա հ ե լ ի » պ ե տ ու թ յ ան ք ա ղ ա ք ա կ ան ու թ յ ան շ ն ու ր հ ի վ :

Վ եր ազ գ այ ն ա գ մ ան գ ու թ ը ն թ ա գ ի ն ն ա խ ու ր ո ղ ե լ Ե , ի ս կ հ ե տ ո ու ղ ե կ ց ե լ Ե ք ան կ այ ի ն կ ա պ ի տ ա լ ի կ ո ն ց ե ն տր ա գ մ ան գ ու թ ը ն թ ա գ ը : Բ ան կ այ ի ն կ ա պ ի տ ա լ ի կ ե ն տր ո ն ա գ ու մ ը տ ե ո ղ ի Ե ու և ն ե ն ու մ ն ու յ ն ս կ գ ք ու և ք ո վ , ի ն չ ու ր ար դ յ ու և ն ա ք եր ա կ ան կ ա պ ի տ ա լ ի կ ե ն տր ո ն ա գ ու մ ը , ք ան ի ու ր մ ա ս շ տ ա ք ի Ե \$ \$ ե կ տ ը գ ու թ ռ ու մ Ե ո չ մ ի ա յ ն ար տ ա դ ր ու թ յ ան ո լ ու ր տ ու մ , ա յ լ ն ան ծ ա ռ ա յ ու թ յ ու և ն եր ի ` ա յ դ

թվում ֆինանսական ծառայությունների  
ունենում: Մասշտաբի էֆֆեկտը օգտագործող  
բանկերի կապիտալի կոնցենտրացիան հիմնական  
առաջնային պատճառը հանդիսանում է ֆինանսական  
ինստիտուտների կենտրոնացումն ու  
խոշորացումը:<sup>15</sup> Բացի այդ, միայն խոշոր բանկերը  
կարող էին տրամադրել միջոցներ, որոնք բավարար  
կլինեին աստիճանաբար հզորացող  
արդյունաբերական խմբերի զարգացման համար:

Ամբողջ XX դարի ընթացքում բուն զարգացած  
երկրների բանկային կապիտալը կարելի է  
բնութագրել կենտրոնացումով: Օրինակ՝ ԱՄՆ-ում  
անցյալ դարի առաջին կեսի ընթացքին տասնամյակներում  
առևտրային բանկերի համախառն ակտիվները աճել  
են համապատասխանաբար \$11 մլրդ-ից մինչև \$3.3 տրլն<sup>16</sup>:  
Նույն միտումը նկատվում է նաև հիմա:

Բանկային կապիտալի կոնցենտրացիան հետ  
մեկտեղ տեղի է ունենում նաև բանկերի  
կենտրոնացում: Այսինքն՝ շուկայից փոքր  
բանկերի դուրս մղումը խոշորների կողմից և  
խոշորների միավորումը ավելի խոշորներ  
ստեղծելու համար:

Բանկային կապիտալի կենտրոնացումն  
ուղեկցվում էր ինտեգրացումով և կարտելների  
ստեղծումով, որոնք համաձայնեցնում էին  
տոկոսադրույքները, դիվիդենտային  
քաղաքականությունը և շուկայում վարվել աճև  
ռազմավարությունը: Վերազգայնացման  
զարգացման հետ ինտեգրացիոն սխեմաները  
նույնպես սկսեցին վերազգային բնույթ կրել:  
Այսինքն՝ ընդունող երկրի բանկերը

<sup>15</sup> Островская О.М. «Банковское дело: Толковый словарь», Науч. Ред. Л.П. Кураков. 2-е изд., Гелиос АРВ, Москва, 2001. (с. 155)

<sup>16</sup> «Guiding Principles for Setting Premium Fees under the Agreement on Guidelines or Officially Supported Export Credits», OECD, Paris. 1999. (pp. 1-7).

կախված ու թյան մեջ են ընկնում բանկային կապիտալի տեղակայման երկրի բանկերից: Յամաշխարհային ֆինանսական հատվածում տեղի ունեցած և ունեցող միաձուլման, փոխկախված ու թյան և կլանման գործընթացները բերել են միջազգային բանկերի ստեղծմանը:

Ժամանակակից տնտեսագետները, պարզաբանելով միջազգային բանկ հասկացությունը, անհրաժեշտ են համարում առանձնացնել նրանուումնասիրման քանակական և որակական ասպեկտները:<sup>17</sup>

Բանկային գործի գործառնական, ոլորտային և աշխարհագրական դիվերսիֆիկացումը բերել է այնպիսի հաստատությունների ստեղծմանը, որոնք ի վիճակի են կատարել և մատուցել շուրջ 200 տիպի բանկային գործառնություններ և ծառայություններ: Դրա հետ մեկտեղ հարկավոր է ընդգծել, որ բանկի գործունեության մասնագիտացման և ընդլայնման միջև ընտրությունը որոշվում է հաճախորդերին ավելի մոտ գտնվելու և շահունթաբերությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ: Յամաշխարհային ֆինանսական շուկայի գործունեության նոր պայմաններում բանկերը ձգտում են դառնալ ոչ այնքան ունիվերսալ, որքան ձգտում են դառնալ առավել մասնագիտացած:

Բանկային ծառայությունների համաշխարհային շուկայի տարբերակիչ առանձնահատկություններից է նրա մոնոպոլացումը «հսկա» բանկերի կողմից: Այսպես, վերազգային կապիտալի շուկան բաժանված է մի քանի տասնյակ մեծ միջազգային բանկերի միջև:

<sup>17</sup> Ромашова А.И. «Роль транснациональных банков в современной мировой экономике», Чебоксары, 2015, (с. 216).

Միջազգային բանկային շրջանակներում առավել նշանակալի են համարվում վարկանիշները, որոնք մշտապես հրատարակվում են այնպիսի կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են “The Banker”, “Euromoney”, “Banker’s Almanac” և այլն: Սակայն 2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո վարկանիշային կազմակերպությունների նկատմամբ վստահությունը խարխլվեց, քանի որ նրանցից շատերը ոչ ճշգրիտ տեղեկատվություններ էին հրապարակել: Ժամանակ է անհրաժեշտ, որպեսզի վստահությունը նման կազմակերպությունների նկատմամբ նորից վերականգնվի:

Միջազգային բանկային գործունեության ֆենոմենը առաջացել է շատ ավելի վաղ ժամանակներում: Կարելի է ասել, որ դեռևս հնագույն ժամանակներում, երբ մարդիկ արդեն զբաղվում էին միջազգային առևտրով, կարելի է հայտնաբերել միջազգային բանկային գործունեություն հիշեցնող երևույթներ: Սակայն այն խոշոր, միջազգային բանկերը, որոնք մեր օրերում էլ են շարունակում իրենց գործունեությունը, հիմնականում սկսել են ի հայտ գալ XIX դարի երկրորդ կեսից, այն ժամանակվա զարգացած ինդուստրիալ երկրներում: Դրանց օրինակներն են HSBC և Charter բանկերը Մեծ Բրիտանիայում, Crédit Lyonnais և Société Générale-ը՝ Ֆրանսիայում, Deutsche Bank-ը՝ Գերմանիայում, First National City Bank, Bank of America և Chase Manhattan-ը՝ ԱՄՆ-ում, Mitsubishi և Mitsui-ն՝ Ճապոնիայում:

Մեր բերած օրինակներում նշված բանկերը կամ դրանց ուղղակի ժամանակները հիմնականում հարում են միջազգային բանկերի այն տեսակին, որը մենք անվանում ենք գլոբալ բանկեր: Զենցայս

տեսակի բանկերն են, որ գլոբալ մակարդակի իրենց ազդեցությունը ամբողջապես գերազանցում են միջառքեր կրնե՞րի: Այս բանկերի և ազգային տնտեսությունների բազում թելերով կապվածության պատճառով է, որ նրանց ձախողումը շատ հաճախ ամբողջ տնտեսության անկում է բերում, իսկ որոշ դեպքերում դա նաև դոմինոյի էֆֆեկտ է առաջացնում ամբողջ գլոբալ տնտեսության համար (օրինակ՝ 2008 թ. գլոբալ ճգնաժամը): Նրանց վերաբերում նաև հանրահայտ “Too big to fail” (Չափազանց մեծ՝ ձախողելու համար) արտահայտությունը: Այս բանկերի գործունեությունն ուսումնասիրելու և վերահսկելու համար 2011 թ-ից սկսած Ֆինանսական կայունության խորհուրդը (Financial Stability Board - FSB) ամեն տարի հրապարակում է Համակարգայնորեն կարևոր բանկերի՝ G-SIB ցուցակը, որտեղ նշվում են համաշխարհային մակարդակում գործող “Too big to fail” բանկերը:

Եթե ուսումնասիրենք աշխարհի խոշորագույն միջազգային բանկերն այսօրև տասը տարի առաջ, ապա կտեսնենք որ տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ ինչպես բանկերի դիրքերում, այնպես էլ՝ նրանց աշխարհագրությունում:

**Աղյուսակ 1.** Աշխարհի 10 խոշորագույն բանկերն՝ ըստ ակտիվների ընդհանուր մեծության, 2018թ.<sup>18</sup>

#	Բանկ	Երկիր	Ակտիվներ
1	Industrial and Commercial Bank of China (ICBC)	Չինաստան	\$4,009 մլրդ.
2	China Construction Bank Corporation	Չինաստան	\$3,400 մլրդ.
3	Agricultural Bank of China	Չինաստան	\$3,235 մլրդ.
4	Bank of China Ltd	Չինաստան	\$2,991 մլրդ.
5	Mitsubishi UFJ Financial Group	Ճապոնիա	\$2,784 մլրդ.

<sup>18</sup> “The world's 100 largest banks”, Standard & Poor, April 6, 2018 - <https://www.spglobal.com/marketintelligence/en/news-insights/research/the-world-s-100-largest-banks>

6	JPMorgan Chase	ԱՄՆ	\$2,533 մլրդ .
7	HSBC Holdings PLC	Մեծ Բրիտանիա	\$2,521 մլրդ .
8	BNP Paribas	Ֆրանսիա	\$2,357 մլրդ .
9	Bank of America	ԱՄՆ	\$2,281 մլրդ .
10	Crédit Agricole	Ֆրանսիա	\$2,117 մլրդ .


**Աղյուսակ 2.** Աշխարհի 10 խոշորագույն բանկերի ըստակտիվներին ընդհանուր մեծույթյան, 2008թ.<sup>19</sup>

#	Բանկ	Երկիր	Ակտիվներ
1	Royal Bank of Scotland Group	Մեծ Բրիտանիա	\$3,807 մլրդ .
2	Deutsche Bank	Գերմանիա	\$2,974 մլրդ .
3	BNP Paribas	Ֆրանսիա	\$2,494 մլրդ .
4	Barclays	Մեծ Բրիտանիա	\$2,459 մլրդ .
5	HSBC	Մեծ Բրիտանիա	\$2,354 մլրդ .
6	Crédit Agricole	Ֆրանսիա	\$2,268 մլրդ .
7	Citi	ԱՄՆ	\$2,188 մլրդ .
8	UBS	Շվեյցարիա	\$2,019 մլրդ .
9	Bank of America	ԱՄՆ	\$1,716 մլրդ .
10	Société Générale	Ֆրանսիա	\$1,578 մլրդ .

Նաև պետք է նշենք որ 50 ամենախոշոր բանկերի կապիտալը տաս տարիներին ընթացքում \$59,968 մլրդ-ից աճել է \$72,466 մլրդ: Առավել հետաքրքիր փոփոխություններ են տեղի ունեցել խոշոր բանկերի աշխարհագրական մեջ:

<sup>19</sup> “The World's Biggest Banks 2008”, Global Finance, August 9, 2009 – <https://www.gfmag.com/awards-rankings/best-banks-and-financial-rankings/the-worlds-biggest-banks-2008>

**Գ ծ պատկ ե ր 1.20 Թ ո Վ -100 մ ի ջ ա զ գ ա յ ի ն ք ա ն կ ե ր ի ա շ խ ա ր հ ա զ ր ա կ ա ն տ ե ղ ա ք ա շ խ ո լ մ ը (Յ ա մ ե մ ա տ ա կ ա ն )**



Ի ս կ ե թ ե դ ի տար կ ե ն ք հ ա մ ա շ խ ա ր հ ա յ ի ն 50 ա մ ե ն ա խ ո շ ո Ր ք ա ն կ ե ր ը , կ տ ե ս ն ե ն ք ո Ր վ ե ր ջ ի ն տ ա ս ը տ ա ր ի ն ե ր ի ը ն թ ա ց ք ո լ մ ա յ ս ց ո լ ց ա կ ո լ մ տ պ ա վ ո Ր ի չ թ ո ի չ ք է գ ր ա ն ց ե լ Չ ի ն ա ս տ ա ն ը ` ն ա խ կ ի ն 4-ի փ ո խ ա ր ե ն ` 12 ք ա ն կ : Ի Ր ե ն ց ն ե ր կ ա յ ո լ թ յ ո լ ն ը գ գ ա լ ի ո Ր ե ն ա վ ե լ ա ց Ր ե լ ե ն Ա վ ս տ Ր ա լ ի ա ն ` 4 ք ա ն կ ` 1-ի փ ո խ ա ր ե ն և Կ ա ն ա դ ա ն ` 3 ք ա ն կ 1-ի փ ո խ ա ր ե ն : Ն ա խ կ ի ն 4 ք ա ն կ ի փ ո խ ա ր ե ն Ճ ա պ ո ն ի ա ն ն ե ր կ ա յ ա ն ո լ մ է 5-ո վ : Ե Ր կ ո լ ա կ ա ն ք ա ն կ ե Ր ո վ շ ա Ր ո լ ն ա կ ո լ մ ե ն ն ե ր կ ա յ ա ց վ ա ծ լ ի ն ե լ Ի ս պ ա ն ի ա ն , Ի տ ա լ ի ա ն , Ն ի դ ե Ր լ ա ն դ ն ե Ր ը և Շ վ ե յ ց ա Ր ի ա ն : 6 ք ա ն կ ի փ ո խ ա ր ե ն 5 ք ա ն կ ո վ ե ն ն ե ր կ ա յ ա ն ո լ մ Մ ե ծ Բ Ր ի տ ա ն ի ա ն և

<sup>20</sup> Կազմվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով "The world's 100 largest banks". Standard & Poor. April 6, 2018-ի վրա



Ֆրանսիան: Չգալիորեն կրճատվել է ամերիկյան բանկերի քանակը՝ 7-ից՝ 4, առավելապես՝ Գերմանիան. այն նախկին 8 բանկի փոխարեն ներկայացված է ընդամենը 1բանկով:

Միանգամայն այլ պատկեր է ստացվում, երբ բանկերը համեմատում ենք՝ ըստ իրենց շուկայական կապիտալացման չափերի:

**Աղյուսակ 3.<sup>21</sup>** Աշխարհի 10 խոշորագույն բանկերն՝ ըստ շուկայական կապիտալացման չափի, 2018թ.

#	Բանկ	Երկիր	Ակտիվներ
1	JPMorgan Chase & Co.	ԱՄՆ	\$364.35մլրդ.
2	Industrial and Commercial Bank of China	Չինաստան	\$308.63մլրդ.
3	Bank of America	ԱՄՆ	\$294.45մլրդ.
4	Wells Fargo & Co.	ԱՄՆ	\$263.09մլրդ.
5	China Construction Bank Corporation	Չինաստան	\$253.30մլրդ.
6	HSBC Holdings PLC	Մեծ Բրիտանիա	\$194.07մլրդ.
7	Agricultural Bank of China	Չինաստան	\$181.40մլրդ.
8	Citigroup Inc.	ԱՄՆ	\$170.06մլրդ.
9	Bank of China	Չինաստան	\$167.89մլրդ.
10	China Merchants Bank	Չինաստան	\$110.84մլրդ.

**Աղյուսակ 4.<sup>22</sup>** Աշխարհի 10 խոշորագույն բանկերն՝ ըստ շուկայական կապիտալացման չափի, 2008թ.

#	Բանկ	Երկիր	Ակտիվներ
1	ICBC	Չինաստան	\$277.51մլրդ.
2	Bank of America	ԱՄՆ	\$195.93մլրդ.
3	HSBC Holdings	Մեծ Բրիտանիա	\$176.78մլրդ.
4	China Construction Bank	Չինաստան	\$165.23մլրդ.

<sup>21</sup> "TOP Banks in the World 2018 ranked by market capitalization", Banks Daily, May 31, 2018. -

<https://banksdaily.com/topbanks/World/market-cap-2018.html>


<sup>22</sup> "TOP Banks in the World 2008 ranked by market capitalization", Banks Daily, December 31, 2008. -

<https://banksdaily.com/topbanks/World/2008.html>

5	Bank of China	Չ ի ն ա ս տ ա ն	\$165.08 մ լ ը ղ .
6	JP Morgan Chase	Ա Մ Ն	\$159.61 մ լ ը ղ .
7	Citigroup	Ա Մ Ն	\$140.69 մ լ ը ղ .
8	Wells Fargo	Ա Մ Ն	\$112.36 մ լ ը ղ .
9	Banco Santander	Ի ս պ ա ն ի ա	\$109.86 մ լ ը ղ .
10	Mitsubishi UFJ Financial	Ճ ա պ ո ն ի ա	\$105.41 մ լ ը ղ .

Ց ու ց ա կ ու մ ն երկայացված 50 բանկերի ծագման երկրների համաձայն՝ բանկային կապիտալացումն ունի հետևյալ «ազգային» պատկանելի ությունը :

**Գ ծ պ ա տ կ ե թ 2.<sup>23</sup>** *Ը ս տ բ ա ն կ ա յ ի ն կ ա պ ի տ ա լ ա ց մ ա ն ՝ թ ո փ -50 մ ի ջ ա զ գ ա յ ի ն բ ա ն կ եր ի ա շ խ ա ր հ ա գ ը ա կ ա ն տ ե ղ ա բ ա շ խ ո մ ը (մ լ ը ղ \$)*



Յ ե տ ա զ ո տ ու թ յ ու ն ն եր ը ց ու յ ց ե ն տ ա լ ի ս , ո թ չ ն ա յ ա ծ չ ի ն ա կ ա ն բ ա ն կ եր ն ի թ ե ն ց ա կ տ ի վ ն եր ի մ ե ծ ու թ յ ա մ ք գ եր ա զ ա ն ց ու մ ե ն բ ո լ ո թ ի ն , ա յ ն ու ա մ ե ն ա յ ն ի վ ն ը ա ն ց գ ո թ ու ն ե ու թ յ ու ն ը շ ա թ ու ն ա կ ու մ է հ ի մ ն վ ա ծ լ ի ն ե լ ա թ խ ա յ ի կ մ ե թ ո ղ ն եր ի վ ը ա : Չ ի ն ա կ ա ն բ ա ն կ եր ու մ , ի

<sup>23</sup> Կազմվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով "TOP Banks in the World 2018 ranked by market capitalization". Banks Daily. May 31, 2018-ի վրա

տարբերությունները և զարգացած երկրներում  
տեղակայված միջազգային բանկերի,  
ներդրումային բանկային գործունեությունը  
չնչին մասեկազմում: Չինական բանկերը պասիվ են  
ֆինանսական շուկաներում արժեթղթերի առք ու  
վաճառքի մեջ: Դրա փոխարեն չինական բանկերը թե՛  
երկրի ներսում, թե՛ արտերկրում (նամանավանդ՝  
Ավստրալիայում) վարկային բուժմ են առաջացրել:  
ԱՄՆ-ն այս առիթով իր անհանգստությունն է  
հայտնել, քանի որ նախկինում անկառավարելի  
վարկային բուժմերը միշտ հանգեցրել են  
պայթյունների<sup>24</sup>:

Բուժմ - պայթյուն շրջանները (boom-bust circles) ավելի,  
բայց ոչ միշտ, բնորոշ են թույլ ինստիտուցիոնալ  
հենքեր ունեցող տնտեսություններին: Այդ  
պատճառով, երկրների համար շատ կարևոր է  
ինստիտուցիոնալ մակարդակի վրա ունենալ ճիշտ  
կարգավորումներ և ենթակառուցվածքներ:  
Միջազգային բանկերը կարող են հաստատվել նաև  
թույլ ինստիտուցիոնալ միջավայր ունեցող  
երկրներում: Սակայն այդ պայմաններում  
սպասվող դրական արդյունքները չեն լինի.  
Մասնավորապես օտարերկրյա բանկերը շուկայից  
դուրս կմղեն տեղական բանկերին, իսկ իրենք հենց  
կարող են ճգնաժամեր հարուցել կամ դրանք  
ներմուծել այլ երկրներից<sup>25</sup>:

<sup>24</sup> S. Chen, J. Shik Kang “Credit Booms—Is China Different?”, IMF Working Paper, 2018 (pp 5-16)

<sup>25</sup> S. Ongena, A. Popov, “When the Cat’s Away the Mice Will Play: Does Regulation at Home Affect Bank RiskTaking Abroad?”, ECB, Working paper series, Frankfurt am Main, 2013, (pp 8-15)

**1.3 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ  
ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԼՈՒԲԱԼ  
ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ**

Անցյալ դարի 90-ական թթ., երբ գլոբալացումը նոր թափ հավաքեց, նոր թափ հավաքեց նաև բանկերի միջազգային, ինչպես նաև գլոբալ գործունեությունը: Գաղափարական արգելքների վերացումը և տեխնոլոգիաների՝ հատկապես կապի միջոցների զարգացումը թույլ տվեցին, որպեսզի բանկերն ավելի ինտենսիվացնեն իրենց գործունեությունն արտերկրում: Տարածման համար հատկապես գրավիչ շուկա էին նոր անկախացած կամ անցումային տնտեսությունները՝ երկրները: Այսօր համաշխարհային տնտեսության միջարքոլորտներում միջազգային բանկերի դերը անփոխարինելի է դարձել:

Միջազգային բանկերը ներգրավված են միջազգային գործունեության երկու հիմնական տեսակի մեջ՝ միջսահմանային փոխառություններ և ֆիզիկական ներկայություն: Վերջինս

վերաբերում է տեղական բանկային համակարգերում մասնաճյուղերի և դուստրկազմակերպությունների միջոցով գործունեության ծավալմանը:

Բանկերը իրենց գործունեությունը տարածում են դեպի այլ երկրներ, որպեսզի դիվերսիֆիկացնեն ռիսկերը, մեծացնեն եկամուտները և հասնեն մասշտաբի էֆֆեկտի: Բանկերը նաև արտասահմանյան առևտուրը ֆինանսավորելու երկար ավանդույթ ունեն, նրանք երբեմն նաև հետևում են միջազգային առևտրում ներգրավված իրենց հաճախորդ ընկերություններին: Ռիսկի դիվերսիֆիկացումը հատկապես հաջող է, երբ ծագման երկիրը տնտեսական խնդիրներ ունի, և այդ նույն խնդիրները բացակայում են ընդունող երկրում: Դա հաճախ է տեղի ունենում, երբ երկու երկրները գտնվում են տարբեր տարածաշրջաններում: Ընդունող երկրի վարկառուի տեսանկյունից ճգնաժամերի կամ ներքին խնդիրների ժամանակ ֆինանսավորման աղբյուրների զանազանությունը թույլ է տալիս, որ երկրում վարկավորման առաջարկը շատ ընկնի:

Օտար երկրյա բանկերը կարող են բարձրացնել մրցակցությունը, ինչը կհանգեցնի ռեսուրսների ավելի դյուրին մոբիլիզացմանը և տեղաբաշխմանը, ինչպես նաև ֆիրմաների և տնային տնտեսությունների համար ֆինանսների հասանելիությունը: Սակայն վերջիններիս համար հաճախ ֆինանսների հասանելիությունն ավելի շատ ապահովում են ոչ թե օտար երկրյա բանկերը, որոնք հիմնականում աշխատում են մեծ ընկերությունների հետ, այլ տեղական բանկերը, որոնք, օտար երկրյաների ստեղծած

մրցակցությունն իցել ներկայում, ստիպված իրենց նախկին հաճախորդ մեծ ընկերություններին փոխարինում են փոքր ու միջին ձեռնարկություններով (ՓՄՁ) և տնային տնտեսություններով, որոնք նախկինում անտեսված էին: Սակայն, պետք է նշել, որ օտարերկրյա բանկերի մուտքի հետևանքները դրական են, միայն երբ երկրում առկա է կայուն ինստիտուցիոնալ միջավայր: Եթե առկա են բանկերկամավարություններ թաքուհամաձայնություններ, եթե Կենտրոնական բանկի ինքնավարությունը թերի է, եթե երկրում գործում է օլիգարխիկ համակարգ, որի մաս են կազմում նաև բանկերը, ապա օտարերկրյա բանկերի ի հայտ գալը իրավիճակը չի կարգավորելու, այլ ստացվելու է այնպես, որ օտարերկրյա բանկերը դառնալու են խնդրի մասը, այլ ոչ թե դրա լուծումը: Այդ պատճառով, կամավարությունները պետք է ձգտեն ոչ միայն նպաստավոր պայմաններ ստեղծել միջազգային բանկերին ներգրավելու համար, այլ և բարենպաստ միջավայր ստեղծեն, որպեսզի միջազգային բանկերի գործունեությունը տեղական բանկերի հետ միասին նպաստի երկրի տնտեսության զարգացմանը:

Բանկի՝ նոր երկիր մուտք գործելու որոշման վրա մեծ ազդեցություն են ունենում գոյություն ունեցող կարգավորումները և օրենսդրական ամեն տեսակի սահմանափակումները: Մի կողմից, ընդունող երկրում գործող գերկարգավորումները և սահմանափակումները վանում են օտարերկրյա բանկերին և նրանց ստիպում են այլ երկրներ փնտրել գործունեություն ծավալելու համար: Մյուս կողմից, ծագման երկրում գոյություն ունեցող գերկարգավորումները և սահմանափակումները

նպաստում են, որ բանկերն ավելի ակտիվ գործունեություն ծավալեն արտերկրում, հիմնականում այն երկրներում, որոնք իրենց ծագման երկրից ավելի ազատական քաղաքականություն են վարում: Օտարերկրյա բանկերի հանդեպ վարած քաղաքականությունից է մեծ հաշվով կախված, թե ինչ տեսքով բանկը կներկայանա ընդունող երկրում՝ մասնաճյուղի, թե դուստրկազմակերպության: Նախ, ակնհայտ է, որ մասնաճյուղի միջոցով ներկայանալն ավելի պարզ, հեշտ և բանկի համար առավել նախընտրելի ուղի է: Սակայն միշտ էլ, որ դահնարավոր է: Ծատբան դարձյալ կախված է ընդունող երկրի օրենսդրությունից, նրանից, թե այն որքանով է նպաստում կամ, ընդհակառակը, խոչընդոտում արտասահմանյան բանկերի ներկայացվածությունը մասնաճյուղերի միջոցով: Մասնաճյուղերի միջոցով ներկայանալը առավել հարմարավետ է, երբ բանկի ծագման և ընդունող երկրները գտնվում են միևնույն տարածաշրջանում, երբ երկրների բնակչություններն ունեն պատմամշակութային և քաղաքակրթական նմանություններ<sup>26</sup>: Նպաստում է նաև նույն տնտեսաքաղաքական միավորման մեջ գտնվելը, ինչն ապահովում է կարգավորման միասնական համակարգ և օրենսդրությունների նմանություն: Դրա համար միմյանց տարածքում մասնաճյուղ բացելու համար ամենալավ պայմանները ապահովված են Եվրոպական Միության երկրների համար<sup>27</sup>:

Հակառակ դեպքում, հատկապես այն պարագաներում, երբ լուրջ տարբերություններ

<sup>26</sup> G. Calzolari, G. Loranth "Regulation of Multinational Banks: A Theoretical Inquiry", Journal of Financial Intermediation, Ithaca, 2011, (pp 178–198)

<sup>27</sup> S. Claessens N. van Horen "Location Decisions of Foreign Banks and Competitive Advantage", Policy Research Working Paper, World Bank, Washington, DC. 2007 (pp 5-16)

եւ նեւոյ՝ յուրաքանչյուր երկրի համար հարկավոր է մշակել գործողութիւններ յուրահատուկ ազմավարութիւն, ավելի նպատակահարմար է բացել դուստր քանկեր, որոնք թեպէտև հանդիսանում են մայր քանկի սեփականութիւն, սակայն արտերկրում իրենց գործողութիւնները հարցում կարող են ինքնավարութիւն դրսևորել:

Կարող է տարօրինակ թվալ, բայց աշխարհում տարբեր երկրների քանկային համակարգերում օտարերկրյա քանկերի ներկայութեանը վերաբերող շատ քիչ հետազոտութիւններ են իրականացվել: Այդ թեմայով հիմնական լայնածավալ հետազոտութիւնը, որին հղում է կատարում նաև Համաշխարհային քանկը, հովանդացիներ Կլաեսսենսի և Վան Հորենի հավաքագրած տվյալների բազան է, որն հրատարակվել է 2015թ.<sup>28</sup>:

Ուսումնասիրվել են 137 երկրների քանկային համակարգերը, իսկ ուսումնասիրութեան առարկա է հանդիսացել օտարերկրյա քանկերի քանակը քանկերի ընդհանուր քանակի մեջ, ինչպես նաև օտարերկրյա քանկերի կողմից վերահսկվող կապիտալի բաժինը ընդհանուր քանկային կապիտալի մեջ:


Հիմա դիտարկենք օտարերկրյա նշանակալի մասնակցութիւնն ունեցող (բաժնետոմսերի 50%-ից ավելին վերահսկող) քանկերի քանակը ընդհանուր քանկերի քանակի համեմատութեամբ:

---

<sup>28</sup> S. Claessens N. van Horen “Database on bank ownership”, IMF Economic Review, 2015 - [https://www.dnb.nl/.../CvH%20Bank%20Ownership%20Database\\_1995-2013-FINAL](https://www.dnb.nl/.../CvH%20Bank%20Ownership%20Database_1995-2013-FINAL)



**Գծպատկեր 3. Բոլոր բանկերի և օտարերկրյա սեփականություն հանդիսացող բանկերի քանակի համեմատությունը (2002-2013թթ.)**




Այս տվյալները մեզ հնարավորություն են տալիս ուսումնասիրել բանկերի վիճակը 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից առաջ և հետո: Դրանք ցույց են տալիս, որ 2002-2009 թթ. աշխարհում բանկերի ընդհանուր թիվը մնացել է նույնը այն դեպքում, երբ օտարերկրյա բանկերի թիվն աճել է՝ իրենց մասնաբաժինը բանկերի ընդհանուր քանակում 23%-ից հասցնելով 28%-ի: Դա հիմնականում արձանագրում է օտարերկրյա բանկերի կողմից տեղական բանկերի կլանումը կամ բաժնետոմսերի մեծ մասի նկատմամբ վերահսկողության հաստատումը: Հետագայում՝ ճգնաժամից հետո, նկատում ենք բանկերի ընդհանուր քանակի անկում. 2013 թ. 2008 թ. համեմատությամբ այն ընկել էր շուրջ 25%-ով: Կրճատվել էր նաև միջազգային բանկերի ընդհանուր քանակը նույն ժամանակահատվածի համար ընդամենը 5.5%-ով: Օտարերկրյա բանկերի

մասնաբաժինը բանկերի ընդհանուր քանակի մեջ կազմել է 35.5%: Ճգնաժամից հետո սկսվեցին բանկերի սնանկացումների, միաձուլումների և կոնսոլիդացումների գործընթացներ, որոնք, ինչպես երևում է, հիմնականում ազդել են տեղական բանկերի վրա:


Մեզ համար հետաքրքիր էր ուսումնասիրել ճգնաժամի ազդեցությունը նաև արդեն ըստգարգացող - գարգացած երկրների:

**Գծպատկեր 4. Բարձր եկամտունակ նեցող երկրներում բոլոր բանկերի և օտարերկրյա սեփականություն հանդիսացող բանկերի քանակը (2002-2013 թթ.)**



Չարգացած երկրներում նույնպես նկատվում է ճգնաժամի ազդեցությունը, սակայն այս պարագայում նկատվում է օտարերկրյա բանկերի քանակի փոքր, բայց անկում: Սակայն, քանի որ տեղական բանկերի քանակն էլ ավելի ռադիկալ կրճատումների է ենթարկվել, օտարերկրյա բանկերի մասնաբաժինը բանկերի ընդհանուր քանակի մեջ 2013թ. կազմել է 25% 2002թ. 20%-ի փոխարեն:

**Գծ պատկեր 5.** *Չարգացող երկրներում բոլոր բանկերի և օտարերկրյա սեփականություն հանդիսացող բանկերի քանակը*<sup>29</sup>




Այլ պատկեր է զարգացող երկրներում: Այստեղ, բացինրանից, որ օտարերկրյա բանկերի քանակը 2002 թ. համեմատությամբ աճել է, արմատականորեն կրճատվել է տեղական բանկերի քանակը, այդ պատճառով էլ օտարերկրյա բանկերի մասնաբաժինը բանկերի ընդհանուր քանակի մեջ 2013 թ. կազմել է 41% 2008 թ. 31.5%-ի փոխարեն:

Յետաքրքիր պատկեր է ստացվում, երբ դիտարկում ենք օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը բանկային համակարգի կապիտալի մեջ: Կան երկրներ, որտեղ օտարերկրյա կապիտալի բաժինը բանկային համակարգում հասնում է 100%-ի, կան նաև երկրներ, որտեղ այդ թիվը հասնում է 0-ի: Որպես ցուցանիշ՝ մենք վերցրել ենք դիտարկված 137 երկրների ցուցանիշների միջին թվաքանակը:

<sup>29</sup>Գծազրկերը կազմվել են հեղինակի կողմից՝ S. Claessens N. van Horen “Database on bank ownership”, IMF Economic Review, 2015 - [https://www.dnb.nl/.../CvH%20Bank%20Ownership%20Database\\_1995-2013-FINAL-ի վրա](https://www.dnb.nl/.../CvH%20Bank%20Ownership%20Database_1995-2013-FINAL-ի վրա):


**Գծ պատկեր 6.** *Օտարերկրյա կապիտալի միջին չափաբաժինը բոլոր երկրների բանկային կապիտալում (%)*




Ինչպես տեսնում ենք, մինչև համաշխարհային ճգնաժամը օտարերկրյա բանկային կապիտալի չափաբաժինը անընդհատ աճել է, սակայն 2008-2013 թթ. այդ ցուցանիշը մնացել է անփոփոխ: Սա արդեն տարբերվում է բանկերի քանակի ցուցանիշից:

Իսկ եթե նույն ցուցանիշը դիտարկենք արդեն ըստ զարգացած և զարգացող երկրների, կունենանք հետևյալ պատկերը.

**Գծ պատկեր 7.** Օտարերկրյա բանկերի կապիտալի միջին չափաբաժինը զարգացած երկրների բանկային կապիտալում 2002-2013թթ. (%)



**Գծ պատկեր 8.** Օտարերկրյա բանկերի կապիտալի միջին չափաբաժինը զարգացող երկրների բանկային կապիտալում 2002-2013թթ. (%)<sup>30</sup>



Տեսնում ենք, որ, ըստ զարգացող և զարգացած երկրների, օտարերկրյա բանկային կապիտալի չափաբաժինների փոփոխությունն տեմպերը չունեն

<sup>30</sup> Գծագրերը կազմվել են հեղինակի կողմից հիմնվելով The World Bank. “Global financial development database” July 2018 - [pubdocs.worldbank.org/en/.../July-2018-global-financial-development-database.xlsx](https://pubdocs.worldbank.org/en/.../July-2018-global-financial-development-database.xlsx)

այն դիսամիկան, որը կար բանկերի քանակի փոփոխություն դիսամիկայի մեջ: Այստեղից եզրակացնում ենք, որ տեղական բանկերի քանակի կրճատումը հիմնականում տեղի է ունեցել այլ տեղական բանկերի հետ միաձուլումների արդյունքում: Թեև 2014 թ-իցի վեր բանկերի վերաբերյալ այսպիսի գլոբալ վերլուծությունն չի եղել, սակայն հաշվի առնելով վերջի տարիներին տեղի ունեցած որոշ հանգամանքների փոփոխությունը՝ կարծում ենք, որ գլոբալ մակարդակով բանկերի քանակի մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել: Այդ հանգամանքներից են Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի կողմից 2010-2011 թթ. մշակված նոր կարգավորումները, որոնք ավելի հայտնի են Բազել III անվանումով: Բազել III-ը, մասնավորապես, բանկերից պահանջում է, որպեսզի նրանց բաժնետիրական կապիտալը կազմի ակտիվների առավելագույն 4.5%-ը (նախկին 2%-ի փոխարեն), ինչպես նաև պահանջում է, այսպես կոչված «Առաջին մակարդակի» (Tier 1) կապիտալի համարժեքության 6%-անոց ցուցանիշ (նախկին 4%-ի փոխարեն): Այն ենթադրում է նաև կապիտալի 2.5%-անոց կոնսերվացում, ինչպես նաև վարկավորման բունն աճի ժամանակաշրջանի պահուստ, որը թույլ է տալիս կարգավորողներին բանկերից պահանջել պահուստավորել իրենց կապիտալի ևս 2.5%-ը: Այս նոր կարգավորումների արդյունքում մի շարք երկրներ (այդ թվում մեր երկրի) բանկային համակարգերում 2017 թ. ընթացքում տեղի ունեցան բանկերի միաձուլումներին և կապիտալի կոնսոլիդացմանը ու համալրմանը ուղղված քայլեր: Այդ պրոցեսին, նամանավանդ կապիտալի համալրմանը լուրջ մասնակցություն է ունեցել

նաև օտարերկրյա կապիտալը՝ բանկային և ոչ միայն:

Եթե ուշադրություն դարձնենք Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) գնահատականներին, կարգավորման այս նոր պահանջներին պատճառով բանկերի տոկոսադրույքների սփրեդը կարող է ավելանալ 0.15%-0,5%-ով, ինչը կարող է դանդաղեցնել գլոբալ տնտեսական աճը 0.05-0.15%-ով: Քննադատների պնդմամբ, հենց խստացող բանկային վերահսկողությունն է պատճառը, որ հետճգնաժամային վերականգնումն աշխարհում դանդաղ տեմպերով է ընթանում: Իսկ նոր չափորոշիչների կողմնակիցների պնդմամբ, հենց բանկային թուլյալ կարգավորումը հանդիսացավ վերջին ճգնաժամի պատճառը<sup>31</sup>:

Այն հանգամանքը, որ գոյություն ունի բանկային գործունեությունը կարգավորող գլոբալ համակարգ, արդեն լուրջ բանավեճի առարկա է: Արմատական հակագլոբալիստները՝ ինչպես ձախակողմյան, այնպես էլ աջակողմյան, դեմ են այսպիսի կենտրոնացված կարգավորմանը այնպես, ինչպես առևտրի դեպքում դեմ են ԱՅԿ կարգավորումներին: Ձախ հակագլոբալիստների կարծիքով այսպիսի կազմակերպությունները վերահսկվում են զարգացած պետությունների կամ գերհզոր գլոբալ կազմակերպությունների կողմից, և վերջիններս այդ վերազային կազմակերպությունների միջոցով փորձում են զարգացող երկրներին ծառայեցնել հոգուտ սեփական շահերի: Աջ հակագլոբալիստների կարծիքով գլոբալ մակարդակում կարգավորումներ իրականացնող

<sup>31</sup> OECD. "OECD Business and Finance Outlook 2017: Highlights", 2017, (pp 7-10) - <http://www.oecd.org/daf/OECD-Business-Finance-Outlook-2017-Highlights.pdf>

կազմակերպությունները վտանգ են ներկայացնում իրենց երկրների ազգային ինքնիշխանությունը: Սակայն այս երկու ծայրահեղական մոտեցումներին էլ կարելի է հակադարձել: Նախ, զարգացած երկրներից և այդ երկրները ներկայացնող միջազգային կազմակերպություններից խուսափելուց առաջ հարկավոր է հիշել, որ այդ երկրները և կազմակերպությունները շատ հաճախ իրար մրցակիցներ են, և կախվածությունից խուսափելու հիմնական գրավականը բոլորի համար բաց լինելն է և երկրի ներսում մրցակցության համար հարմարավետ միջավայր ստեղծելն է: Իսկ այն մտահոգությունները, թե միջազգային բանկային կարգավորումը վտանգում է ազգային ինքնիշխանությունը, փարատվում են, երբ ուսումնասիրում ենք միջազգային փորձը: Այդ փորձը ցույց է տալիս, որ երկրները, անկախ իրենց երկրներում գործող օտարերկրյա բանկերի քանակից, պահպանում են իրենց ինքնիշխանությունը, քանի դեռ ունեն ազգային կենտրոնական բանկ և վարում են ինքնուրույն դրամավարկային քաղաքականություն: Իսկ ինքնիշխանությունից ոչ թե զրկվում են, այլ այն սահմանափակում են սեփական կամքով: Այդպիսի օրինակ են 1993 թ. Մասստրիխտյան պայմանագիրը ստորագրած եվրոպական երկրները, որոնք համաձայնեցին սահմանափակել սեփական կենտրոնական բանկերի ինքնիշխանությունը ի օգուտն որ ստեղծվելիք եվրոպական կենտրոնական բանկի: Հիշեցնենք, որ 1999 թ-ից սկսած հենց այդ բանկն է վարում է եվրագոտու անդամ հանդիսացող երկրների միասնական դրամավարկային քաղաքականությունը:



Միջազգային բանկային գործունեությունը չի սահմանափակվում միայն արտասահմանում դուստր բանկերի կամ մասնաճյուղերի միջոցով ակտիվություն ծավալելով: Միջազգային բանկային գործունեության մեկ այլ տեսակ է նաև միջսահմանային փոխառությունը, ինչը աստիճանաբար ավելի նշանակելի տեղ է զբաղեցնում: Միջսահմանային բանկային վարկավորումների չափը կրկնապատկվել է 2001-2014 թթ.ը նթացքում: Այս աճի մեջ կարևոր դեր են խաղում զարգացող պետությունները՝ միաժամանակ որպես վարկերի աղբյուր և նպատակակետ: Ուշադրության է արժանի այն փաստը, որ ճգնաժամից հետո զարգացող երկրներից դեպի այլ զարգացող երկրներ հոսքը էլ ավելի է աշխուժացել ի տարբերություն զարգացած երկիր - զարգացող երկիր հոսքի:

Միջսահմանային փոխառությունը կարող է օգտակար լինել ինչպես փոխատուի, այնպես էլ փոխառուի համար: Միջսահմանային փոխառությունների միջոցով մեկ երկրում կուտակված խնայողությունները կարող են արագորեն փոխանցվել ներդրումների կարիք ունեցող այլ երկիր գլոբալ մասշտաբով: Այն նաև միջազգային բանկերին հնարավորություն է տալիս ռեսուրսների ավելի էֆեկտիվ ալոկացիա, հետևաբար ռիսկերի դիվերսիֆիկացում իրականացնել:<sup>32</sup> Վարկառուների տեսանկյունից միջազգային բանկերը կարող են թուլացնել ընդունող երկրներում առկա ֆինանսական խոչընդոտները՝ վարկերի այլ ընտրանքային աղբյուրներ տրամադրելով: Հետագայում օտարերկրյա կապիտալի ներկայությունը կարող է

<sup>32</sup> R. De Haas, I. van Lelyveld "Foreign Bank Penetration and Private Sector Credit in Central and Eastern Europe", Journal of Emerging Market Finance, 2004, (pp 125–151)

ընդունող երկրների ղեկավարներին դրդել  
ներդրումների համար ավելի բարենպաստ  
քաղաքականություն ունենալու, որպեսզի այդ  
ներդրումային հոսանքները չդադարեն, այլ,  
ընդհակառակը, ավելի ինտենսիվ դառնան: Այդպիսի  
քաղաքականությունը վաղ թե ուշ բերելու է  
երկրում օտարերկրյա \$ինանսների միջև  
մրցակցության, ինչը նույնպես դրական երևույթ է,  
քանի որ բերելու է այդ \$ինանսների որակի  
բարձրացմանը:


Միջսահմանային բանկային  
գործունեությունը կարող է նաև ընդունող երկրի  
\$ինանսական կայունության համար վտանգ  
պարունակել, նամանավանդ երբ ընդունող երկիրն  
ինքը չի ապահովում արտաքին \$ինանսավորման  
աղբյուրների դիվերսիֆիկացումը: Հայտնի է, որ  
երկրները վայելում են արտաքին \$ինանսների  
ներհոսք, երբ \$ինանսների աղբյուր հանդիսացող  
երկրում իրավիճակը դրական է, և ընդհակառակը՝  
երբ \$ինանսների աղբյուր հանդիսացող երկրում ի  
հայտ են գալիս խնդիրներ, տեղի է ունենում  
\$ինանսների վերադարձ դեպի կազմակերպության  
տեղակայման երկիր: Այդպես վարվեցին  
արևմտեվրոպական երկրների բանկերը, երբ  
ճգնաժամի ժամանակ կտրեցին դեպի  
արևելեվրոպական երկրներ հոսող վարկերի  
հոսքը<sup>33</sup>: ճգնաժամի ընթացքում նույն կերպ  
վարվեցին նաև ավելի մեծ տարածում ունեցող  
գլոբալ բանկերը: Այն երկրները, որոնք բոլորից  
շատ են ապավինում արտասահմանյան  
\$ինանսավորման հոսքերին, սովորաբար ամենից  
շատ են տուժում ճգնաժամերի պատճառով: Այս  
հանգամանքը միջսահմանային վարկավորումը

<sup>33</sup> A. Popov, S. Ongena, G. F. Udel “When the Cat’s Away the Mice Will Play: Does Regulation at Home Affect Bank RiskTaking Abroad?”, Journal of Financial Economics, 2013, (pp 727–750)

Էականորեն տարբերում է երկրում միջազգային բանկի ֆիզիկական ներկայությունից, քանի որ միջսահմանային վարկավորումը ավելի առածական է:

Եթե միջսահմանային փոխառությունները սկսենք դիտարկել զարգացող - զարգացած երկրների համատեքստում, ապա կտեսնենք, որ զարգացող երկրները գնալով համեմատաբար ավելի շատ միջսահմանային ֆինանսավորում են ստանում:

**Գծապատկեր 9.** Միջսահմանային փոխառությունների աճի տեմպերը 2000-2018 թթ. (%)<sup>34</sup>




Միջսահմանային պարտավորությունները և սինդիկացված վարկերը 2002-2014 թթ.


<sup>34</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, հիմնվելով "BIS- Consolidated banking statistics". <https://www.bis.org/statistics/constats.htm>

Ժամանակահատվածում ավելի արագ են աճել զարգացող երկրների, քան զարգացած երկրների միջև: Իրականում զարգացող-զարգացող փոխառու թյունները ավելի արագ են զարգացել, քան զարգացած-զարգացած, զարգացած-զարգացող և զարգացող-զարգացած փոխառու թյունները:

**Գծպատկեր 10, 11.** Միջսահմանային բանկային պարտավորումներն՝ ըստ երկրների կատեգորիաների (%)



**Գծպատկեր 12, 13.** Միջսահմանային բանկային սինդիկատական վարկերն՝ ըստ երկրների կատեգորիաների (%)<sup>35</sup>



<sup>35</sup> "Global Financial Development Report 2017 / 2018: Bankers without Borders", World Bank Group, Washington D.C., (p 87)

Չնայած որ զարգացող-զարգացող հոսքերը ամենափոքր բաժինն են կազմում, դրանց աճի տեմպերը տպավորիչ են: Եվ այդ տեմպերը մնում են նույնը, նույնիսկ եթե հաշվարկներում չդիտարկենք Չինաստանը. միևնույն է, թվերը կմնան նույնը այլ երկրների հաշվին: Սա բացատրվում է նրանով, որ զարգացած երկրների \$ինանսական կազմակերպությունները ճգնաժամից հետո նախընտրում են աշխատել հիմնականում քիչ ռիսկային շուկաների հետ: Իսկ զարգացող երկրների \$ինանսական կազմակերպությունները, որոնք ձգտում են ամեն գնով ավելացնել իրենց հաճախորդային բազան և մեծացնել իրենց գործունեության աշխարհագրությունը, լրացնում են գլոբալ բանկերի պատճառով առաջացած այդ բացը <sup>36</sup>:

Բանկերը նպաստում են միջազգային առևտրի զարգացմանը՝ առևտրային վարկեր տրամադրելով ինչպես ներմուծողներին, այնպես էլ արտահանողներին: Բանկերի կողմից միջնորդավորված \$ինանսները միայն 2011 թ. աջակցել են \$6.5-8 տրլն ընդհանուր արժողույթի ամբ առևտրի, որը կազմում էր ամբողջ առևտրի մեկ երրորդը: Այս գումարից \$2 տրլն-ը միջնորդավորվել էր Միջազգային առևտրային պալատի (ՄԱՊ) գործունեությանը մասնակցող 21 խոշոր գլոբալ բանկերի կողմից <sup>37</sup>:

Առևտրի բանկային միջնորդավորված \$ինանսավորումը տարբերվում է ըստ տարածաշրջանների: Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսությունները, որոնց 2011 թ. բաժին էր

<sup>36</sup> T. Didier, R. Levine, S. L. Schmukler “Capital Market Financing, Firm Growth, and Firm Size Distribution”, World Bank Group, Washington D.C., 2015, (pp 9-14)

<sup>37</sup> CGFS (Committee on the Global Financial System) “Trade Finance: Developments and Issues”, CGFS Paper 50, Bank for International Settlements, Basel, 2014, (pp 8-16)

հասնում համընդհանուր առևտրի 36%-ը, ստացել են առևտրի բանկային ֆինանսավորման կեսը: Մյուս կողմից, եվրոպական տնտեսությունները, որոնց բաժին է հասնում համաշխարհային առևտրի 40%-ը, ստացել են ֆինանսավորման ընդամենը մեկ քառորդը: Պարզվում է, որ առևտրի բանկային միջնորդավորված ֆինանսավորումը ավելի ինտենսիվ է դեպի թույլ ֆինանսական և օրենսդրական միջավայր ունեցող երկրներ արտահանումը ֆինանսավորելու համար:<sup>38</sup>

Դատելով աշխարհի առաջավոր 1000 բանկերի ցուցանիշներին՝ համաշխարհային բանկային համակարգը 2018 թ. ընդհանուր առմամբ եղել է ավելի ճակում, և շահունակում է բարելավել վիճակը<sup>39</sup>: Ընդհանուր շահույթի ցուցանիշը կազմել է \$1.1 տրլն՝ 2017 թ. համեմատ աճելով 15.6%-ով: Սա 10 անգամ գերազանցում է մեկ տասնամյակ առաջվա մակարդակը, երբ ֆինանսական ճգնաժամը աշխարհով մեկ հարվածել էր տնտեսություններին: Լավ նորություն է նաև այն, որ այս շահույթի աճը տեղի չի ունեցել ռիսկերի ավելացման հաշվին: «Առաջին մակարդակի» (Tier 1) կապիտալը նույնպես աճել է 11.7%-ով՝ հասնելով ռեկորդային \$8.2 տրլն, իսկ ակտիվները ավելի համեստ աճ են գրանցել՝ ընդամենը 9%՝ հասնելով \$123.7 մլրդ: Որպես արդյունք՝ կապիտալ - ակտիվներ հարաբերակցությունը կազմել է 13.5%, որն ընդամենը 0.1%-ով է գերազանցում նախորդ տարվա ցուցանիշը, և այս նույն տեղեկությունները նկատվում է վերջին յոթ տարիների ընթացքում: Կապիտալի եկամտաբերության ցուցանիշը 2009 թ. մինչև 2.69% անկումից հետո 2010 թ. վերականգնվեց մինչև 8.16%,

<sup>38</sup> F. Niepman, T. Schmidt-Eisenlohr “International Trade, Risk and the Role of Banks”, Staff Reports, Federal Reserve Bank of New York, 2013, (pp 8-11)

<sup>39</sup> The Banker – “Summary of the Top 1000 World Banks”, 2019. - <https://www.thebanker.com/Top-1000>.

որից հետո տատանվում է 12%-14.5%-ի միջակայքում: Դա նշանակում է, որ մի կողմից, կան որոշ բանկեր, որոնք լավ ցուցանիշներ են գրանցում և նույնիսկ գերազանցում են այս միջին ցուցանիշը, մյուս կողմից, կան բանկեր, որոնց ցուցանիշները պակաս են միջինից, և հետևաբար չեն ապահովում իրենց բաժնետերերի ակնկալիքները: Դրանք հիմնականում այն բանկերն են, որոնք դժվարանում են հարմարվել բանկային գլոբալ շուկայի փոփոխություններին: Այս ամենը նշանակում է, որ երկրների փոխկապվածության գործընթացը գլոբալացմանը զուգահեռ շարունակվում է, և հետևաբար միջազգային բանկերի դերը գնալով բարձրանալու է: Այլ հարց է, թե ինչպիսին է դրանց ազդեցությունը առանձին երկրների տնտեսություններին վրա:

**2. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԳԼՈՒԲԱԼ ԱՑՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՆՈՒ  
ԴՐԱՆՑ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՉԳԱՅԻՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ**

**2.1 ԱՉԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ՕՏԱՐԵՐ ԿՐՅԱԿԱՊԻՏԱԼ ՈՎ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ  
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Վերջին երկու տասնամյակների ընթացքում միջազգային բանկերի ակնհայտ միջազգային էքսպանսիան ուղեկցվում էր նրանց կողմից արտասահմանում ուղղակի ներդրումների արագ աճով և շատ երկրների բանկային համակարգերում իրենց ներկայությունն ավելացմամբ: Տարբեր երկրների բանկային համակարգերում օտարերկրյա կապիտալի ներկայությունը իրենից բավական նկարագարդ պատկեր է ներկայացնում: Այն բնութագրվում է հակադիր միտումներով և սերտորեն կապված է այնպիսի հարցերի հետ, ինչպիսիք են \$ինանսական կայունությունը, ազգային բանկային համակարգերի ինքնիշխանությունն ապահովումը, ԱՅԿ անդամակցության պայմաններում բանկային պրոտեկցիոնիզմ իրականացնելու պետության հնարավորությունը:

Միջազգային բանկերի 1990-ական թթ. մեկնարկած և մինչև օրս շարունակվող արտաքին էքսպանսիայի արագացումը սուր բանավեճեր է առաջացրել դրանից բխող տնտեսական հնարավոր հետևանքների շուրջ: Բանավեճերի մեծ մասը վերաբերում է զարգացող երկրների տնտեսությունների վրա



ազդեցությունը: Մասնավորապես, զարգացող երկրներ օտարերկրյա բանկերի մուտքի դրական ազդեցություններն են դասվում<sup>40</sup>:

- Օտարերկրյա բանկերի ծագման երկրների հետ քաղաքական և տնտեսական ինտեգրման խթանումը:
- Բանկային ծառայությունների ազգային շուկայում մրցակցության ուժեղացումը, ինչը նպաստում է դրանց որակի և հասանելիության բարձրացմանը նաև ի հաշիվ վարկերի տոկոսադրույքների նվազման:
- Տնտեսության մեջ ֆինանսական միջնորդության համակարգի արդյունավետության բարձրացումը, ի հաշիվ մոնոպոլիզմի, կլանայնության և այլ թերությունների հաղթահարման:
- Օտարերկրյա միջազգային բանկերի կողմից զարգացող երկրների տնտեսությունների ներդրումային վարկավորման ծավալների աճը՝ տեղական բանկերի համեմատ ֆունդավորման ավելի «երկար» աղբյուրներ օգտագործելով:
- Զարգացող երկրների տնտեսությունների իրական հատվածների մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքի ավելացման նախապայմանների ստեղծումը: Ենթադրվում է, որ վերազգային կորպորացիաները ավելի ակտիվորեն կգնան այն երկրներ, որտեղ օտարերկրյա բանկերի շնորհիվ գոյություն ունեն ժամանակակից բանկային ենթակառուցվածքներ:
- Տեղական բանկերի համար օտարերկրյա միջազգային բանկերի կողմից օգտագործվող

<sup>40</sup> Claessens and Van Horen: "Trade: The benefits of foreign banks".VOX.2017/ <https://voxeu.org/article/trade-benefits-foreign-banks>

ինովացիոն տեխնոլոգիաների փոխառու թյան հնարավոր թյան աճը:

Այս ամենի կողքին հնչում են նաև բավական շատ կարծիքներ՝ ընդդեմ միջազգային բանկերի արտաքին էքսպանսիայի: Այսպես, հաճախ ասվում է, որ միջազգային բանկերի մուտքը թուլացնում է տեղական բանկերի դիրքերը և նախապայմաններ է ստեղծում, որ ազգային բանկային համակարգը լիովին անցնի արտասահմանյան վերահսկողության տակ: Միաժամանակ, ընդունող երկրների համար ավելանում են մակրոտնտեսական ռիսկերը: Մասնավորապես, ուժեղանում է տնտեսության ապակայունացման վտանգը՝ երկրում միջազգային բանկերի ստորաբաժանումների գործունեության կտրուկ շրջման, ինչպես նաև դեպի գլխամասեր \$ի նախնական ռեսուրսների լայնածավալ «հայրենադարձության» հետևանքով, ինչը տեղի է ունենում որոշ ճգնաժամային իրավիճակների առաջացման պատճառով: Միջազգային բանկերի տարածման մեկ այլ բացասական հետևանք է ազգային բանկային համակարգի կառավարելիության նվազումը, այդ թվում օբյեկտիվ բարդությունների պատճառով, որոնց հետ տեղական կարգավորող մարմինները ստիպված են բախվել, երբ գործ են ունենում օտարերկրյա բանկերի ստորաբաժանումների, հատկապես մասնաճյուղերի հետ<sup>41</sup>:

Ներկայացված «դեմ» և «կողմ» փաստարկները վերջին տարիներին դարձել են մեծաքանակ էմպիրիկ հետազոտությունների առարկա:

Ինչպես արդեն նշել էինք վերևում, երկրների բանկային համակարգերում օտարերկրյա բանկերի

<sup>41</sup> Bank for International Settlements. CGFS Papers No 41: “Long-term issues in international banking”. 2010

ներկայ ության վերաբերյալ վերջին և ուրջ հետազոտությունները տեղի են ունեցել 2014թ.<sup>42</sup>:

Ուսումնասիրվել են հարյուրից ավելի երկրների բանկային համակարգեր, իսկ ուսումնասիրության առարկա է հանդիսացել օտարերկրյա նշանակալի կապիտալով (բաժնետոմսերի 50% և ավելի) գործող բանկերի քանակը բանկերի ընդհանուր քանակի մեջ, ինչպես նաև օտարերկրյա նշանակալի կապիտալով բանկային ակտիվների բաժինը ընդհանուր բանկային ակտիվների մեջ:

Ի հարկե այդ ժամանակներից սկսած՝ երկրների բանկային համակարգերում մի շարք փոփոխություններ են տեղի ունեցել: Փոփոխվել են օտարերկրյա բանկային կապիտալի ցուցանիշները ազգային բանկային համակարգերի մեջ: Այդ պատճառով մենք որոշել ենք երկրները ներառել հինգ խմբերի մեջ՝ A, B, C, D, E՝ հաշվի առնելով, որ օտարերկրյա կապիտալի ցուցանիշների տատանումները հիմնականում տեղի են ունենում այդ խմբերի ներսում: Ի հարկե կան նաև առանձին դեպքեր, երբ երկիրը տեղափոխվել է մեկ խմբից մյուս: Այդ թվում նաև Յայաստանը, որը E խմբից տեղափոխվել է C խումբ:

A խմբի մեջ ներառվել են այն երկրները, որոնց բանկային համակարգերում օտարերկրյա բանկերի ակտիվների բաժինը կազմում է 0%-20%, B խմբի մեջ՝ 20%-40%, C խմբի մեջ՝ 40%-60%, D խմբի մեջ՝ 60%-80%, E խմբի մեջ՝ 80%-100%:

<sup>42</sup> S. Claessens N. van Horen “Database on bank ownership”, IMF Economic Review, 2015 - [https://www.dnb.nl/.../CvH%20Bank%20Ownership%20Database\\_1995-2013-FINAL](https://www.dnb.nl/.../CvH%20Bank%20Ownership%20Database_1995-2013-FINAL)

**Աղյուցակ 5. Երկրների խմբավորված ությունն՝ ըստ բանկային ակտիվներում օտարերկրյա բանկերի ակտիվների մեծ ության (%)**

**Ախոսումք**

Մարոկկո, Նիգերիա, Դանիա, Վենեսուելա, Մալազիա, Բոլիվիա, Ալժիր, Բրազիլիա, Կոլոմբիա, Նորվեգիա, Թուրքիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ղազախստան, Էկվադոր, Նեպալ, Օման, ԱՄՆ, Դոմին.Յան., Ռուսաստան, Քուվեյթ, Հարավային Կորեա, Թայլանդ, Իտալիա, Ֆրանսիա, Վիետնամ, Ադրբեջան, Նիդերլանդներ, Բանգլադեշ, Կանադա, Հնդկաստան, Ավստրալիա, Չինաստան, Ծվեյցարիա, Ֆիլիպիններ, ԱՄԷ, Կուբա, Եթովպիա, Հունաստան, Հաիթի, Իսլանդիա, Իրան, Իսրայել, Լիբիա, Կատար, Սաուդյան Արաբիա, Ծրի Լանկա, Ճապոնիա, Ծվեդիա, Եմեն:

**Բխոսումք**

Իռլանդիա, Քենիա, Մալավի, Չիլի, Բելառուս, Գվատեմալա, Ուկրաինա, Ինդոնեզիա, Մոլդովա, Ավստրիա, Կոստա Ռիկա, Արգենտինա, Հոնգոնգոն, Սլովենիա, Պորտուգալիա, Հարավային Աֆրիկա, Եգիպտոս:

**Շխոսումք**

Լատվիա, Հունգարիա, Մավրիկիոս, Անգոլա, Հունդուրաս, Բահրեյն, Նամիբիա, Պակիստան, Պարագվայ, Պերու, Բելգիա, Տանզանիա, Հայաստան (2018):

**Ըխոսումք**

Ղրղզստան, Բոտսվանա, Լեհաստան, Սերբիա, Սլովակիա, Բուրունդի, Մեքսիկա, Մակեդոնիա, Վրաստան, Բուլղարիա:

**Էխոսումք**

Բարբադոս, Մալվադոր, Մադագասկար, Սվազիլենդ, Չամբիա, Էստոնիա, Մոզամբիկ, Նոր Չեկանդիա, Հունկոնգ, Լյուքսեմբուրգ, Ուրուգվայ, Ճամայկա, Լիտվա, Հորվաթիա, Ալբանիա, Մոնտենեգրո, Բոսնիա և Հերց.,

Չ ե խ հ ա, Ու գ ա ն դ ա, Ֆ ի ն լ ա ն դ ի ա:

Չարմանալի չ է, որ օտարերկրյա կապիտալի գրոյական ներկայությունն է գրանցվել Կուբայում և Իրանում: Յետաքրքիր է, որ այս ցուցանիշը գրեթե գրոյի է մոտենում OECD անդամ երկու երկրներում՝ Ճապոնիայում և Շվեդիայում: Օտարերկրյա բանկերը բացակայում են Պարսից ծոցի նավթ արդյունահանող երկրներում՝ Սաուդյան Արաբիայում, Քաթարում, Օմանում: Եվ վերջապես, բանկային համակարգում օտարերկրյա ներկայության բացակայության այս խմբի մեջ են գտնվում նաև Եթովպիան, Շրի Լանկան, Իսլանդիան, Լիբիան և Եմենը<sup>43</sup>: Այս ամենը ցույց է տալիս, որ նույն խմբի մեջ կարող են ներառվել ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներ, ինչպես հիմնականում ազատ, այնպես էլ ոչ այնքան ազատ տնտեսություններ: Նկատելի օրինաչափություններն են, որ G7-ի բոլոր երկրները և G20-ի երկրներից շատերը մտնում են A խմբի մեջ: G7-ի դեպքում դա հիմնականում բացատրվում է նրանով, որ այդ երկրները առաջիններից են սկսել ձևավորել իրենց բանկային համակարգերը, իսկ երբ մրցակցային բանկային շուկա ունենալը դարձավ գլոբալ երևույթ, այս երկրների բանկային համակարգերի հետ մրցակցելն ավելի արդեն բարդացավ, մանավանդ՝ հենց այդ երկրների ներսում: Իսկ G20-ի երկրներից շատերը հանդիսանում են նոր ինդուստրիալ երկրներ, որոնք բանկային շուկա մուտքի համար կիրառում էին կամ շարունակում են կիրառել օրենսդրական սահմանափակումներ:


<sup>43</sup> The Global Economy “Foreign bank assets as percent of the total bank assets”, 2013 - [https://www.theglobaleconomy.com/rankings/Foreign\\_bank\\_assets/](https://www.theglobaleconomy.com/rankings/Foreign_bank_assets/)

Երկրի բանկային համակարգ օտարերկրյա կապիտալը կարելի է ներգրավել միայն բանկային շուկայի ընդլայնման և նոր եկամուտների գեներացման հեռանկարներով: Իսկ ինչպես ասացինք վերևում, դրան խոչընդոտում է ինմիշարքերևույթներ, ինչպես տնտեսության

<sup>71</sup> IMF. “FINANCIAL SYSTEM STABILITY ASSESSMENT—PRESSRELEASE; STAFF REPORT; AND STATEMENT BY THE EXECUTIVE DIRECTOR FOR THE REPUBLIC OF ARMENIA”. December 2018. (p. 7)


ստվերայնությունը, և ընդհանրապես ցածր  
ակտիվությունը: Այդ խնդիրների վերացումով,  
ինչը կարծես թե իրագործման փուլում է, տնային  
տնտեսությունների և ձեռնարկությունների  
ֆինանսավորման ընդլայնման համար նոր  
նախադրյալներ են ստեղծվել:

**2.3 ՕՏԱՐԵՐԿՐՅԱԿԱՊԻՏԱԼ Ի  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Օտարերկրյա բանկային կապիտալը Հայաստան սկսել է ներթափանցել անկախությունը հետո և այդ ժամանակներից սկսած իր տեսքով և որակով անընդհատ ենթարկվել է փոփոխությունների այնպես, ինչպես փոփոխությունների ենթարկվել Հայաստանի ողջ բանկային համակարգը: Բացառությունը նշեղան նաև վերջին մի քանի տարիների գործընթացները: 2014 թ. վերջին Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկն առևտրային բանկերի համար վեց անգամ բարձրացրեց բանկերի մինիմալ կապիտալի պահանջը: Այդ խնդիրը լուծվում է երկու ճանապարհով՝ կապիտալի համալրման և միաձուլումների: Բանկերն իրենց կանոնադրական կապիտալները համալրում էին ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ներդրումների միջոցով: Այլ բանկեր, որոնց չհաջողվեց լուծել կապիտալի համալրման խնդիրը, ընտրեցին միաձուլումների ճանապարհը: 2017 թ. չորս բանկեր, որոնցից երեքը օտարերկրյա բանկերի դուստրեր, միաձուլվեցին հայկական բանկերի հետ: Այս գործընթացների արդյունքում նկատվում է Հայաստանի բանկային համակարգում օտարերկրյա մասնակցության նվազում:



**Գծ ապատկ եր 22.** *Յայ աս տան ի քան կայ ի ն համակարգում օտարերկրյա կապիտալի մասնաբաժնի, օտարերկրյա քանկերի քանակի, ակտիվների փոփոխությունների (%)<sup>72</sup>*



Այս տվյալներին նայելով՝ հնարավոր է տպավորություն ստեղծվի, որ տեղի է ունենում Յայ աս տան ի ց օտարերկրյա քանկերի «փախուստ», որը կարող է վկայել տնտեսությունում և քանկային համակարգում իրավիճակի վատթարացման մասին: Սակայն, եթե նորից դիտարկենք նախորդ ենթազվիտում ներկայացված տվյալները, մասնավորապես ակտիվների աճի վերաբերյալ կամ ֆինանսական համակարգի գնահատման ծրագրի (FSAP) կողմից իրականացված Յայ աս տան ի քանկային համակարգի վերլուծությունը, համաձայն որի մեր քանկային համակարգը արդյունավետ

<sup>72</sup> Կազմվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով Համաշխարհային բանկի "July 2018 Financial stability database"-ի և ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների վրա

վերահսկողություն հիմնարար սկզբունքներին քաղաքարում էր 97%-ով, ապա կհասկանանք, որ խոսքը գնում է բանկային կապիտալի որակի բարձրացման մասին: Բացի դրանից, բանկը համարվում է օտարերկրյա, եթե նրա բաժնետոմսերի 50%-ից ավելին պատկանում է օտարերկրյա ռեզիդենտ իրավաբանական կամ ֆիզիկական անձի: Ինչպես տեսանք, երեք օտարերկրյա բանկերի մասնաճյուղեր միաձուլվել էին հայկական բանկերի հետ, դա նշանակում է որ այդ բանկերի ակտիվները հիմա համարվում են հայկական բանկերի ակտիվներ:

Այս փաստերը մյուս կողմից կարող են մեղմացնել այն մարդկանց անհանգստությունը, ովքեր ահազանգում էին, որ օտարերկրյա կապիտալի ազատ մուտքը բանկային համակարգ կարող է վտանգել մեր երկրի ազգային ինքնիշխանությունը: Նույն մարդիկ ահազանգում էին, որ Կենտրոնական բանկի կողմից բանկերի կապիտալի միևիմալ պահանջի բարձրացումը բերելու է օտարերկրյա բանկերի կանոնադրական կապիտալի միայն օտարերկրյա միջոցներով համալրմանը, որն էլ տանելու է հայկական բանկերի փաստացի վերացմանը: Ինչպես տեսնում ենք, հայկական բանկերը ոչ միայն չեն վերացել, այլ ավելի են ամրապնդել իրենց դիրքերը:<sup>73</sup>

Ամեն դեպքում օտարերկրյա բանկային կապիտալը շարունակում է և մեր կարծիքով, ապագայում շարունակելու է կարևոր դեր խաղալ Յայաստանի բանկային համակարգում: Յայաստանյան 17 բանկերից 15-ը ունեն առնվազն մեկ օտարերկրացի բաժնետեր: Իսկ բանկերից 10-ում բաժնետոմսերի մեծամասնությունը պատկանում է


<sup>73</sup> Լ. Օվսյան, Օտարերկրյա ներդրումները ՀՀ բանկային համակարգում, «ԻՆԼԱՅԹ» ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ, 2017թ./ <https://enlightngo.org/post/3756>

օտարերկրյա ռեզիդենտներին, այսինքն՝ այդ քանկերը կարող ենք համարել օտարերկրյա: Մտավախու թյան հիմք կունենայինք, եթե երկրում օտարերկրյա քանկերի ճնշող մեծամասնությունը պատկաներ միայն մեկ երկրի ռեզիդենտների: Այդ դեպքում վտանգ կստեղծվեր, որ այդ երկրի տնտեսական ցնցումները քանկերի միջոցով կհարվածեն մեր երկրին: Մեկ այլ վտանգ է, այդ երկրի քաղաքական ազդեցության տակ ընկնելը, մանավանդ եթե գործ ունենանք օտարերկրյա պետական քանկերի հետ: Բայց Յայաստանում օտարերկրյա քանկային ներկայությունը բավական բազմազան է:

**Գծապատկեր 23.** *Օտարերկրյա քանկերի ազդեցությունը և դրանց գումարային (եթե մեկ քանկից ավելի է) ակտիվների բաժինն ընդհանուրի մեջ .2018թ.<sup>74</sup> (%)*

---

<sup>74</sup> Պատրաստվել է հեղինակի կողմից, հիմնվելով «KPMG, Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրություն, 2018Q4» վրա:




Հայաստանում գործում են երեք կիպրական, երկու ռուսական բանկեր և մեկական բանկեր ունեն ամերիկյան, բրիտանական, լիբանանյան և իրանյան սեփականատերեր: Սակայն այդ 10 բանկերից միայն չորսն են հանդիսանում միջազգային բանկային հաստատությունների դոստրեր. HSBC Բանկ Հայաստան (HSBC, Մեծ Բրիտանիա), Բիբլոս Բանկ Հայաստան (Բիբլոս Բանկ SAL, Լիբանան), Մելլաթ Բանկ (Մելլաթ, Իրան) և ՎՏԲ-Հայաստան Բանկ (ՎՏԲ, Ռուսաստան): ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկուլ Բանկում զգալի մասնակցություն ունի \$րանսիական խոշորագույն Cr dit Agricole բանկը, սակայն այն չի կառավարում բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը, այդ պատճառով բանկը համարվում է հայկական:

Խոշոր միջազգային \$ինանսական հաստատությունները հայկական բանկերի կապիտալում ներկայացված են ի դեմս Վերականգման և զարգացման վրոպական բանկի՝ ՎԶԵԲ (EBRD), Ասիական զարգացման բանկի (KfW) - Deutsche Investitions -und Entwicklungsgesellschaft mbH - DEG բանկային խմբի, Միջազգային \$ինանսական կորպորացիայի՝ IFC-ի, Rural Impulse Fund II (բելգիական Incofin Investment Management - Incofin IM խմբի անդամ):

Նախ սկսենք նրանից, որ Հայաստանի բանկային համակարգում օտարերկրյա մասնակցությունը, ի տարբերություն բազմաթիվ այլ երկրների, միջտունեցել է իր առանձնահատկությունները: Եթե դիտարկում ենք այլ երկրների բանկային համակարգերում օտարերկրյա բանկային կապիտալի ներկայությունը, ապա տեսնում ենք, որ հիմնականում դա կապված է միջազգային կամ գլոբալ տարածում ունեցող բանկային ինստիտուտների հետ: Հայաստանի պարագայում, ինչպես ասացինք, պատկերն այլ է. մեր երկրի օտարերկրյա 10 բանկերից միայն չորսն են հանդիսանում միջազգային բանկերի դոստրեր: Այս բանկերից ամենամեծը՝ ՎՏԲ Հայաստանը իր ակտիվների մեծությամբ վեցերորդ տեղում է, HSBC Հայաստանը՝ 12-րդ, իսկ Բիբլոս Բանկ Հայաստանը և Մելլաթ բանկը զբաղեցնում են վերջին երկու տեղերը՝ համապատասխանաբար 16-րդ և 17-րդ, իրենց երկուական մասնաճյուղերով: Այս բանկերից միայն ՎՏԲ Հայաստանն է, որ մասնաճյուղեր ունի մայրաքաղաքից դուրս:

**Գծապատկեր 24.** *Հայաստանում միջազգային բանկային հաստատությունների դոստրերի համախառն ակտիվների բաժինը բանկային համակարգի ընդհանուր ակտիվների մեջ. 2018թ.<sup>75</sup>*

<sup>75</sup> Հաշվարկվել և պատրաստվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով «KPMG, Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրություն, 2018Q4»-ի վրա:



2018 թ. արդյունքներով Հայաստանի 17 բանկերից միայն մեկն է տարին ամփոփել վնասով, ն դա է դեղ է ՎՏԲ Հայաստան բանկը: Նույն պատկերն էր 2017 թ., սակայն այս անգամ տարին վնասով ամփոփած բանկը մեկ այլ միջազգային բանկի դուստր՝ HSBC Հայաստանն էր:

Մենք փորձել ենք հաշվարկել հայաստանյան բանկերում օտարերկրյա կապիտալի շահույթաբերությունը, որպեսզի տեսնեք՝ ինչ պիսիս է դեղ նախկինում, ինչ պիսիս է հիմա և հասկանալ, թե ինչ ուղղություններով այն կարող է զարգանալ:

Իսկ օտարերկրյա կապիտալի շահույթաբերությունը հաշվարկելու համար մենք սկզբից պետք է հաշվենք օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը Հայաստանի բանկային համակարգի կանոնադրական կապիտալի մեջ:

**Աղյուսակ 7. Հայաստանի բանկերի շահույթը 2002-2017 թթ-երին (մլն դրամ)<sup>76</sup>**

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
<b>ՀՀ բանկերի</b>	<b>4,762</b>	<b>6,515</b>	<b>17,156</b>	<b>11,978</b>	<b>16,418</b>	<b>18,235</b>	<b>28,011</b>	<b>8,969</b>


<sup>76</sup> Հաշվարկվել և կազմվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրատարակված տարեկան հաշվետվությունների վրա:

Չ ա հ ո լ յ թ (մլ ն . դ թ ա մ)	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
	30,468	31,424	42,821	37,928	21,195	(20,356)	31,659	40,368

Յ Ե տ ո ղ Ե տ ք Ե Ի ա մ Ե մ ա տ Ե ն ք Յ ա յ ա ս տ ա ն Ի Բ ա ն կ Ե թ Ի կ ա ն ո ն ա դ թ ա կ ա ն կ ա պ Ի տ ա լ ն Ե թ Ի գ ո Լ մ ա թ ը դ թ ա ն ց ո Լ մ ա ճ կ ա օ տ ա թ Ե թ կ թ յ ա կ ա պ Ի տ ա լ Ի գ ո Լ մ ա թ Ի Ի Ե տ :

**Գ ծ ա պ ա տ կ Ե թ 25.** *Ը ն դ Ի հ ա ն ո Լ թ կ ա ն ո ն ա դ թ ա կ ա ն կ ա պ Ի տ ա լ ը և օ տ ա թ Ե թ կ թ յ ա կ ա պ Ի տ ա լ ը Յ ա յ ա ս տ ա ն Ի Բ ա ն կ ա յ Ի ն Ի ա մ ա կ ա թ գ ո Լ մ .2002-2017թ թ .(մլ ն դ թ ա մ )<sup>77</sup>*


<sup>77</sup> Հաշվարկվել և կազմվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրատարակված տարեկան հաշվետվությունների և S.S. Սիմոնյանի «ՕՏԱԲԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ» աշխատության վրա, էջ 99-103, Երևան, 2016 թ.:



Այս երկու մեծ ությունների հարաբերությունից կարող ենք հաշվել այս տարիներին օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը Յայաստանի բանկային համակարգի կանոնադրական կապիտալի մեջ :

**Գծապատկեր 26.** *Յայաստանի բանկերի կանոնադրական կապիտալում օտարերկրյա մասնակցությունը մասնաբաժինը (%)*






Հայաստանի բանկերի օտարերկրյա բաժնետերերի շահույթը հաշվելու համար պետք է օգտագործենք հետևյալ բանաձևը .

$$\text{Շ}_{04} = \text{Շ}_{3F} \times \text{Մ}_{F04}$$

Որտեղ  $\text{Շ}_{04}$  - ը Հայաստանի բանկերում օտարերկրյա բաժնետերերի շահույթն է,  $\text{Շ}_{3F}$  - ը Հայաստանի բանկերի շահույթն է, իսկ  $\text{Մ}_{F04}$  - ը օտարերկրյա կապիտալի մասնաբաժինն է հայաստանյան բանկերում :

**Գծապատկեր 27.** Հայաստանի բանկերում օտարերկրյա բաժնետերերի շահույթները 2002-2017թթ. (մլն դրամ)




Բացարձակ թվերով հաշվելու դեպքում, տեսնում ենք, որ դիտարկվող ժամանակի սկզբից մինչ օրս օտարերկրյա բաժնետերերի շահույթը աճել է շուրջ ութ անգամ: Սակայն, պետք է հաշվի առնենք որ այդ ժամանակահատվածում աճել են նաև առևտրային բանկերի կանոնադրական կապիտալները: Այդ դեպքում անցնում ենք վերջին քայլին, այն է օտարերկրյա կապիտալի շահույթաբերունքը (արդյունավետություն) հաշվարկին: Դա հաշվարկելու համար պետք է օտարերկրյա բաժնետերերի բաժին շահույթը հարաբերենք կանոնադրական կապիտալում օտարերկրյա կապիտալի մեծունքը:

$$\text{ՇՔ}_{04} = (\text{Շահույթ}_{04} / \text{Կապիտալ}_{04}) \times 100$$

Հաշվարկը կատարելուց հետո ստանում ենք հետևյալ պատկերը.

**Գծ ապատկեր 28.** Հայաստանի բանկերում օտարերկրյա կապիտալի շահույթաբերուն թյունը 2002-2017թթ. (%)




Եթե առանձնացնենք 2004 թ., երբ բանկերի շահույթի ենթապատիկ աճ էր արձանագրվել, ընդհանուր առմամբ Հայաստանի բանկային համակարգի օտարերկրյա կապիտալի շահույթաբերուն թյունը երբեք 20%-ից քարձր չի եղել: Բանկային համակարգը ամենից շատ վնաս է կրել 2014 թ. ուսական ճգնաժամի հետևանքներից, որից դեռևս ուշքի չի եկել: Հաշվի առնելով, որ բանկերի միջև աճող մրցակցուն թյունը կարող է տոկոսադրույքի սփրեդը ցածր մակարդակի վրա պահել, շահույթը ավելացնելու ամենապարզ ճանապարհներից է ավանդների ներգրավման և հատկապես վարկերի տրամադրման մակարդակների բարձրացումը: Այդ գործընթացը առանց ռիսկերի ավելացման կարող է խթանվել միայն տնտեսական աճի և բնակչության եկամուտների բարձրացման արդյունքում:

Այս ենթագլխի սկզբում մենք նշեցինք, որ Հայաստանի բանկային համակարգում օտարերկրյա ներկայությունը բավական առանձնահատուկ

պատկեր է ներկայացնում: Խոսքն այն մասին է, որ օտարերկրյա համարվող 10 բանկերից վեցը չեն հանդիսանում օտարերկրյա որևէ բանկային կազմակերպության դուստր կազմակերպություն: Փոխարենը, ունենք մի իրավիճակ, երբ արտասահմանում գրանցված որևէ ընկերություն (գրանցման երկրում գործող կամ չգործող) դառնում է հայաստանյան որևէ բանկի սեփականատեր, իրականացնում է ռեբրենդինգ, այդ դեպքում դառնալով բանկային նոր բրենդի ստեղծում, և սկսում է գործունեություն ծավալել՝ հանդիսանալով օտարերկրյա բանկ, սակայն առանց որևէ միջազգային բանկային խմբի հետևորդ առնչություն ունենալու:

**Գծ ապատկեր 29.** *Հայաստանի բանկային համակարգի ակտիվներում որևէ միջազգային բանկային խմբի մաս չհանդիսացող օտարերկրյա բանկերի մասնաբաժինը .2018թ.<sup>78</sup>*



Այս բանկերի գործունեությանը հետևելիս մեր ուշադրությունը գրավում են երկրի բանկային համակարգում օտարերկրյա ներդրումների ոչ այնքան շուկայական (օբյեկտիվ), որքան անձնային (սուբյեկտիվ)

<sup>78</sup> Հաշվարկվել, և պատրաստվել է հեղինակի կողմից, հիմնվելով «KPMG, Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրություն, 2018Q4»-ի վրա

դրդապատճառները, որոնք այս պարագայում հատկանշական են հենց Յայաստանի համար: Այսինքն՝ այլ պայմաններում եթե դիտարկվեին միայն շուկայական խթանները, այսպիսի ներդրումները երբեք չէին գա Յայաստան: Խոսքը սփյուռքի ֆինանսական ներուժի մասին է, որը այս կամ այն կերպ ներկայացված է այս տեսակի ներդրումների մեջ:

Յայաստանում, ըստ օտարերկրյա բանկերի մայր կազմակերպությունների ծագման երկրների, համախառն բանկային ակտիվներում ամենամեծ բաժինը զբաղեցնում են կիպրական մայր ընկերությունները՝ ունենալով երեք բանկերը: Երբ դիտարկում ենք այդ բանկերի հիմնական բաժնետեր հանդիսացող ընկերություններին, տեսնում ենք, որ դրանք ընդամենը օձորային գոտում գրանցված կազմակերպություններ են, որոնց սեփականատերերը կամ հիմնական բաժնետերերը ազգությունամբ հայ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ են: Ազգությունամբ հայ ռուսաստանցի է նաև Յայաստանում ռուսական ներկայացող երկրորդ բանկի՝ Էվոկայի սեփականատերը: Նման է իրավիճակը նաև ԱրմՍվիսԲանկի հիմնական բաժնետեր HVS Holding-ի լյուքսեմբուրգյան ընկերության պարագայում, որի սեփականատերը շվեյցարահայ է: Իսկ Կոնվերսբանկի ամերիկյան Advanced Global Investments մայր ընկերության սեփականատերը արգենտինահայ է: Այս ամենը մենք ընդգծում ենք մատնանշելու համար, որ Յայաստանի բանկային համակարգի գործունեության մեջ առանցքային դեր է խաղում հայկական սփյուռքը:

Սփյուռքից եկող ներդրումների առավելությունն այն է, որ այլ երկրների հետ համեմատելիս, նույնիսկ ավելի փոքր եկամուտի

ակնկալման պարագայում, սփյուռքահայ ներդրողը նախապատվությունը տալիս է Հայաստանում ներդրում կատարելու տարբերակին: Հենց դա է այն դրդապատճառը, որը մենք անվանեցինք անձնային: Այդ հանգամանքը բավական հեշտացնում է օտարերկրյա կապիտալի ներգրավման գործընթացը մեր երկրի համար: Սակայն անձնային դրդապատճառների վրա հիմնված յուրաքանչյուր ներդրումն ունի իր սահմանափակումը: Ինչքան էլ ներդրումը հիմնված լինի անձնային զգացմունքների վրա, նրա ծավալները չեն մեծանալու, քանի դեռ տեղի չեն ունեցել այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են իրական տնտեսություն - բանկային համակարգ շղթան ակտիվացնելու համար: Այս տեսակի օտարերկրյա ներդրումները նաև կոչված են հանդարտեցնելու այն մտավախության շուրջ բորբոքվող կրքերը, թե օտարերկրյա կապիտալի ներթափանցումը ազգային բանկային համակարգ սպառնում է երկրի ազգային շահերին:

**3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՊԱՆՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԳԼՈՒԲԱԼ ԱՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**3.1 ԲԱԶԵԼ III-Ի ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ  
ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՐԱՇԽԱՎՈՐ**

Նախորդ գլուխներում մենք մի քանի անգամ անդրադարձել ենք բանկային ճգնաժամերի պատճառներին: Տեսանք, թե ինչպես է բանկային

գործունեության գլոբալացումը նպաստում այդ ճգնաժամերի տարածմանը դեպի այլ երկրներ: Ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ ազգայինից միջազգայինի վերաճող խնդիրների համար անհրաժեշտ են միջազգային համապարփակ լուծումներ: Բացի ճգնաժամերի տարածման խնդրից, բանկային գործունեությունը միջազգային մակարդակում կարգավորելու անհրաժեշտությունը բխում է այն իրողությունից, որ բանկերի համար գնալով ավելի է բարդանում առանց օտարերկրյա համագործակցության գործունեություն ծավալելը: Այդ պատճառով «խաղի» միասնական կանոններ հաստատելու անհրաժեշտություն է առաջանում:

Այդ ուղղությամբ առաջին քայլերից եղավ այն, որ 1974 թ. բանկային վերահսկողության միջազգային համակարգման նպատակով ստեղծվեց կենտրոնական բանկերի կառավարիչների մշտական մի հանձնաժողով, որը կոչվեց Բանկային վերահսկողության բազելյան հանձնաժողով կամ **Basel Committee on Banking Supervision (BCBS)**: Սկզբում նրան անդամակցում էին 12 երկրներ՝ Բելգիա, ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Նիդեռլանդներ, Շվեդիա, Լյուքսեմբուրգ և Շվեյցարիա: 2009 թ. BCBS անդամակցությունը ընդլայնվել է՝ ներառելով Արգենտինան, Ավստրալիան, Բրազիլիան, Չինաստանը, Յունկոնգը, Յնդկաստանը, Ինդոնեզիան, Մեքսիկան, Ռուսաստանը, Սաուդյան Արաբիան, Սինգապուրը, Չարավային ԱՖրիկան և Թուրքիան:

Հանձնաժողովի մշտական քարտուղարությունը տեղակայված է Միջազգային հաշվարկների բանկում (**Bank for International Settlements-BIS**), որը

գտնվում է շվեյցարական Բազել քաղաքում: BCBS-ը չունի միջազգային համաձայնագրերում ամրագրված ուղեցույցների պարտադրման պաշտոնական լիազորություն: Դատեղական կարգավորող մարմինների պարտականությունն է, որ միջազգային համաձայնագրերը իրենց իրավասու մարմիններում իրագործվեն: Չափի առնելով, որ BCBS-ին անդամակցում են այն երկրները, որոնց տնտեսությունները և բանկային համակարգերը նշանակալի դեր են խաղում համաշխարհային տնտեսության մեջ, համաձայնագրի չանդամակցող երկրները նույնպես կիրառում են BCBS-ի կարգավորումները:

Վերջին 30 տարիներում մշակվել են բազելյան երեք համաձայնագրեր, որոնք կոչված են կարգավորել միջազգային մակարդակում բանկային գործունեությունը և նվազեցնել հնարավոր ռիսկերը:

Կապիտալի մասին բազելյան համաձայնագիրը, որն ընդունվեց 1988 թ., ստացավ Բազել I անվանումը: Այն միջազգային կարգավորիչ արձագանքն էր 1980-ական թթ. լատինամերիկյան պարտքային ճգնաժամի հետևանքով առաջացած համաշխարհային ֆինանսական համակարգի կայունության վտանգներին: Սկզբում այն հավանության արժանացավ BCBS-ի անդամ երկրների կողմից, իսկ հետո Բազել I-ն ընդունվեց առավել քան 120 երկրների կողմից:

Բազել I-ի հիմնական գաղափարը բանկերի վարկային ռիսկի և հնարավոր կորուստների սահմանափակումն է բանկերի կապիտալի համարժեքության վերահսկման համակարգ կառուցելու միջոցով: Մասնավորապես, ըստ Բազել I համաձայնագրի, բանկի կապիտալի և ռիսկերով



կշռված համախառն ակտիվներ  
հարաբերակցությունը պետք է նվազագույնը լինի  
8%:

Կապիտալի ընդհանուր մեծությունը, որն  
ստուգվում է ըստ բավարարության, բաժանվում է  
երկու մակարդակի: Մակարդակ 1-ը (Tier 1)  
բաժնետիրական կապիտալը և հայտարարած  
պահուստներն են: Մակարդակ 2-ը (Tier 2) լրացուցիչ  
կապիտալն է, որի մեջ ներառում են ցածրորակ  
կապիտալը և թաքնված պահուստները, որոնք երկրի  
օրենսդրության համաձայն հասանելի են բանկին:  
Ընդհանուր առմամբ, երկրորդ մակարդակի  
կապիտալը չպետք է գերազանցի առաջին մակարդակի  
կապիտալի մեծությունը:

Վերադառնալով վարկային ռիսկին՝ ասենք, որ  
նրամեծությունը հաշվվում է ակտիվի մեծություն  
և ռիսկի կշիռի գործակցի բազմապատկումով: Դրա  
համար ակտիվները, ըստ ռիսկայնության  
աստիճանի, բաժանվում են չորս խմբի, որոնց համար  
ընդունված են կշռային գործակիցների հետևյալ  
մեծությունները. 0%, 20%, 50%, 100%: Որքան մեծ է ռիսկը,  
այնքան ավելի մեծ է գործակիցը: Պետք է նշել, որ  
ռիսկայնության գործակիցները հաշվարկելիս  
Բազել I-ում հատուկ ուշադրություն է դարձվել  
Տնտեսական համագործակցության և զարգացման  
կազմակերպության (Organisation for Economic Cooperation and Development -  
OECD) անդամակցությանը: OECD անդամ երկրների համար  
ռիսկի կշիռը ավելի ցածր է հաշվված:

**Աղյուսակ 8.** *Վարկային ռիսկերի կշիռները՝  
համաձայն Բազել I-ի*<sup>79</sup>

**Ռիսկի կշիռ**      **Ակտիվի տեսակ**

<sup>79</sup> 68. I. Finel-Honigman, F. B. Sotelino “International Banking for a New Century”, Routledge – Taylor & Francis Group, London & New York, 2015, (p 140).

0%	Կանխիկ
	OECD երկրների կառավարությունների պարտավորությունները
	Ոչ-OECD երկրների կառավարությունների պարտավորությունները ազգային արժույթով
20%	OECD երկրների բանկերի և բրոքեր-դիլերների պարտավորությունները
	Ոչ-OECD երկրների բանկերի միջև 1 տարի ժամկետով պարտավորությունները
50%	Ռեզիդենտների հիփոթեքային պարտավորությունները
100%	Ոչ-OECD երկրների կառավարությունների պարտավորությունները օտարերկրյա արժույթով
	Ոչ-OECD երկրների բանկերի 1 տարուց ժամկետով պարտավորությունները
	Մասնավոր հատվածի վարկառուների պարտավորությունները

Բազել I-ի կարգավորումները բանկերի կողմից հենց սկզբից արժանացան չորս հիմնական քննադատությունների.

1. Այն չկարողացավ պատշաճորեն տարբերակել մասնավոր հատվածի վարկային ռիսկերը (օրինակ՝ նույն ռիսկի կշիռը կիրառվեց մեծ AAA կորպորացիաների և սթարթ-ափբիզնեսի համար):
2. Նրա OECD/Ոչ-OECD տարբերակումը կամայական էր:
3. Այն չկարողացավ պատշաճ կերպով արձագանքել այն կարևոր փոփոխություններին, որոնք սկսել էին տեղի ունենալ բանկերի հաշվեկշռների կառուցվածքում, սովորաբար տատանվող վարկերից երկրորդային շուկաներում վաճառվող արժեթղթերին:
4. Նրան չհաջողվեց ճանաչել ժամանակակից ֆինանսների վերջին զարգացումները, այդ թվում դիվերսիֆիկացիայի շահավետ ազդեցությունը ռիսկերի նվազեցման վրա՝

Ն ե ր ա ճ Ե Լ Ո Վ Բ ա ն կ Ե ր Ի Ն Ե ր Ք Ի Ն Ռ Ի ս կ Ե ր Ի  
Կ ա ճ ա Վ ա ր մ ա ն մ ո ղ Ե Լ Ն Ե ր ը :

Այս ամենին գումարած բանկային համակարգերում հետագայում առաջացած խնդիրները հանգեցրեցին նրան, որ 1999թ. Բանկային վերահսկողությունը բազելյան հանձնաժողովը (BCBS) ներկայացրեց նոր համաձայնագիր: Այս համաձայնագրի նպատակն էր կապիտալի պահանջները ավելի սերտորեն կապել բանկերի իրական ռիսկերի հետ՝ միևնույն ժամանակ բանկերին խթանելով զարգացնել ավելի բարդ և ուժեղ ներքին ռիսկերի կառավարման համակարգեր, որոնք համապատասխանում են իրենց անհատական գործունեության տարբեր հատկանիշներին: Այս համաձայնագրի անհրաժեշտությունը ամենից շատ զգացվեց 1997թ. ասիական և 1998թ. ռուսական \$ինանսական ճգնաժամերից հետո, երբ սխալ կառավարումը և համակարգային թերույնությունները ճգնաժամերի տարածման պատճառ հանդիսացան:

Համաձայնագիրը վերջնական տեսքի բերվեց 2004թ. և ստացավ Բազել II անվանումը: Այն հիմնված է երեք սյունների (pillar) վրա, որոնք կոչված են բարձրացնել \$ինանսական համակարգի անվտանգությունը և դիմադրողականությունը:

- Սյուն 1-ը հաստատում է կապիտալի միևնույն պահանջները, որոնք բանկերը պետք է ապահովեն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերից պաշտպանվելու համար:
- Սյուն 2-ը ներառում է վերահսկողություն գործընթացը, որը լրացնում է սյուն 1-ին: Այստեղ ներառված են վերահսկողություն, ռիսկերի կառավարման, հաշվետվություններ

թափանցիկությունը հիմնական սկզբունքները: Հատուկ ուշադրություն է դարձվում բանկերի կառավարման արդյունավետությանը և ղեկավար մարմինների պատասխանատվության աստիճանին:

- Սյուն 3-ը վերաբերում է շուկայական կարգապահությանը: Բազելյան կոմիտեն ձգտում է կարգապահությանը բարձրացնել մի շարք պահանջների միջոցով, որոնք վերաբերում են կազմակերպությունների կողմից տեղեկատվության հրապարակմանը և շուկայի այլ մասնակիցների համար հասանելի դարձնելուն:

Բազել II-ի Սյուն 1-ը վերաբերում է մինիմալ կապիտալին հարող վարկային ռիսկերին, շուկայական ռիսկերին և գործառնական ռիսկերին:

Վարկային ռիսկերը կապված են վարկառուների՝ վարկը ժամանակին մարելու անկարողության հետ: Բազել II համաձայնագիրը առաջարկում է կապիտալի վարկային ռիսկի որոշման երեք այլընտրանքային մոտեցում. Ստանդարտացված մոտեցում (Standardized Approach), Հիմնարար ներքին վարկանիշների վրա հիմնված (Internal Rating Based-IRB) մոտեցում և Առաջավոր IRB մոտեցում:

Ստանդարտացված մոտեցման համաձայն, բանկերը իրենց պոտենցյալ վարկառուների վճարունակությունը գնահատելիս պետք է հիմնվեն «արտաքին» վարկանիշների վրա, որոնք կազմվել են ճանաչված ռեյտինգային կազմակերպությունների կողմից:

Ինչպես տեսանք, Բազել I-ում մասնավոր ընկերությունների ռիսկայնության կշիռը գնահատում էր 100%: Սակայն Բազել II-ում այդ

մոտեցումը փոխվեց, և մասնավոր ընկերություններին տրամադրվելիք վարկերի ռիսկայնությունը կշիռը կարող է սահմանվել նույնիսկ 20%:

**Աղյուսակ 9. Ընկերությունների կշիռը ըստ վաճառքի ռիսկի**<sup>80</sup>

Վարկանիշ	AAA AA-	ից A+ից A-	BBB+ BB-	ից BB- ցածր	Չգնահատված
Ռիսկի կշիռ	20%	50%	100%	150%	100%

Ներքին վարկանիշների վրա հիմնված (IRB) մոտեցումները տարբերվում են և՛ Բազել I-ի կարգավորումներից, և՛ ռիսկերի գնահատման ստանդարտացված մոտեցումից: IRB մոտեցումների ժամանակ բանկերը պետք է ի վիճակի լինեն գնահատել թե՛ սպասվող կորուստները (Expected loss - EL), թե՛ անսպասելի կորուստները (Unexpected loss - UL), ինչպես նաև դեֆոլտի հնարավորությունը (probability of default - PD): Հիմնարար IRB-ի դեպքում բանկերը ինքնուրույն են հաշվում դեֆոլտի հնարավորությունը, իսկ մնացած չափանիշները հաշվվում և տրամադրվում են վերահսկող մարմնի կողմից: Առաջավոր IRB մոտեցման դեպքում բանկերը ինքնուրույն են հաշվում նաև մյուս չափանիշները:

Ծուկայական ռիսկը բանկային կորուստերի ռիսկն է, որն առաջանում է տոկոսադրույքների, փոխարժեքների, արժեթղթերի և ապրանքների գների փոփոխությունների պատճառով: Բազել II-ի համաձայն, Բազել I-ի փոփոխությունների պայմաններում բանկերին թույլատրվում է զարգացնել իրենց ներքին կապիտալի շուկայական ռիսկի մոտեցումը (Market Risk Capital Approach - MRA), որոշել շուկայական ռիսկի նվազագույն կապիտալի

<sup>80</sup> I. Finel-Honigman, F. B. Sotelino, “International Banking for a New Century”. New York, 2015. (p 143).

անվտանգության «բարձրկները»: Բանկերի MRA-երը որպես կանոն բաղկացած են ռիսկի արժեքի չափի (Value at Risk - VaR) մեթոդաբանության կիրառումը ներկայացնող, որոնք ներառում են մաթեմատիկական և վիճակագրական ճշգրտումներ դիվերսիֆիկացիայի ազդեցությունները գրավելու համար, այդպիսիք են բացասական կորելացիաների բարենպաստ ազդեցությունները: Որպեսզի բանկային համակարգի վերահսկող մարմինը ընդունի բանկի MRA-ն, բանկը պետք է ցույց տա, որ անընդհատ սթրես-թեստեր է անցկացնում ռիսկի արժեքի չափի շուրջ, ունի ռիսկերի կառավարման և աուդիտի անկախ ստորաբաժանումներ:

Գործառնական ռիսկն այն կորստի ռիսկն է, որն առաջացել է մարդկային սխալի, համակարգային թերությունների կամ արտաքին իրադարձությունների հետևանքով: Բազել II-ը գործառնական ռիսկի կապիտալի կարգավորման համար ունի երեք հիմնական մոտեցում.

- Չիմնական ցուցանիշի մոտեցումը. գործառնական ռիսկի կապիտալը պետք է կազմի հարկումից առաջ բանկի գործող եկամուտի առնվազն 12.5%-ը:
- Առաջավոր չափման մոտեցումը. այն թույլ է տալիս բանկերին օգտագործել իրենց ներքին մոդելները, գործառնական ռիսկը հաշվելու և անհրաժեշտ կապիտալի «բարձրկներ» սահմանելու համար:
- Ստանդարտացված մոտեցումը. այն բանկերին թույլ է տալիս սահմանել իրենց անհրաժեշտ ռիսկային կապիտալի չափը, ազգային վերահսկողի հետ սերտ համագործակցության պայմաններում:

Ընդհանուր առմամբ պարզ է, որ բանկերի կարգավորման հիմնական գործառնությունը պետք է իր վրա վերցնի ազգային կարգավորողը, այսինքն՝ կենտրոնական բանկը: Բազել II-ի շրջանակներում կարգավորողները, չնայած երկրների միջև տարբերություններին, եկել են այն ընդհանուր եզրակացությունը, որ Ընդունելի նորմատիվային կապիտալը (Eligible Regulatory Capital - ERC) չպետք է բանկի Յամախառն ռիսկով կշռված ակտիվների (Total Risk-Weighted Assets - TRWA) 8%-ից փոքր մեծություն լինի: Այլ կերպ ասած.

$$ERC / TRWA \geq 8\%$$

Որտեղ ERC-ն հավասար է Բազել I-ի կապիտալի մեծություն երկու մակարդակների (tier 1 և tier 2) գումարին՝ հանած դեդուկտիվ վազեցումները:

Բազել II-ի Սյուն 2-ը կոչ է անում բանկերի ղեկավարությունը տեղում ունենալ ներքին կապիտալի համարժեքության գնահատման գործընթացներ կապազ կապիտալ պահանջները բավարարելու համար: BCBS-ը կարգավորման ողջ գործընթացը առաջին հերթին տեսնում է բանկի և վերահսկողի միջև շարունակական երկխոսության մեջ, որի արդյունքում բանկը կարողանալու է ձախողումներից խուսափել:

Սյուն 3-ը հիմնականում կենտրոնանում է բանկերի կողմից անհրաժեշտ տեղեկատվության բացահայտման վրա: Բացահայտման մշտական առարկա են հանդիսանում կապիտալի կառուցվածքին վերաբերող թեմաները (ինչպես Tier 1-ը, Tier 2-ը և Ընդունելի նորմատիվային կապիտալը), խոշոր վարկերին վերաբերող համապարփակ տեղեկատվությունը, շուկայական ռիսկի ազդեցատները և գործառնական ռիսկերի որակական հաշվարկումը:

Յամաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը (2008թ.) բացահայտեց բանկերի միջազգային կարգավորման թույլ կողմերը, որի արդյունքում BCBS-ը մշակեց բանկերի կարգավորման նոր՝ Բազել III համաձայնագիրը: Վերջինիս խնդիրներն են նորմատիվային կապիտալի մակարդակի բարձրացումը, բանկերի նորմատիվային կապիտալի որակի բարձրացումը, իրացվելի ության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև ռիսկերի կառավարման, կապիտալի կառավարման արդյունավետ ության բարձրացումը:

Բազել III-ը նույնպես սահմանում է բանկի նորմատիվային կապիտալի Առաջին մակարդակի կապիտալ (Tier 1) և երկրորդ մակարդակի կապիտալ (Tier 2): Tier 1-ը իր հերթին բաղկացած է Կանոնադրական կապիտալից (Common Equity Tier 1 (CET1)) և Լրացուցիչ կապիտալից (Additional Tier 1 (AT1)): Բազել III-ը սահմանել է կապիտալի այսպիսի նվազագույն սահմանաչափեր.

- CET1-ի հարաբերակցությունը ռիսկով կշռված ակտիվներին պետք է կազմի առնվազն 4.5%:
- Tier 2-ի հարաբերակցությունը ռիսկով կշռված ակտիվներին պետք է առնվազն լինի 6%:
- Ընդհանուր կապիտալի (Tier 1 + Tier 2) հարաբերակցությունը ռիսկով կշռված ակտիվներին պետք առնվազն կազմի 8%:

Նախատեսված էր, որ բանկային համակարգերն այս փոփոխությունները կիրականացնեն քայլ առ քայլ մինչև 2019թ.:



**Աղյուցակ 10. Կապիտալի միևիմալ պահանջներն՝ ըստ Բազել III-ի<sup>81</sup>**

Կապիտալ / TRWA	2013	2014	2015	2016	2017	2018	2019
<b>CET1 նվազագույն (Min)</b>	3.5%	4%	4.5%	4.5%	4.5%	4.5%	4.5%
<b>Կապիտալի պահպանման բուժեր (CB)</b>	-	-	-	0.625%	1.25%	1.875%	2.5%
<b>Min CET1 + CB</b>	3.5%	4%	4.5%	5.125%	5.75%	6.375%	7%
<b>Min Tier 1 կապիտալ</b>	4.5%	5.5%	6%	6%	6%	6%	6%
<b>Min Ընդհանուր կապիտալ</b>	8%	8%	8%	8%	8%	8%	8%
<b>Min Ընդհանուր կապիտալ + CB</b>	8%	8%	8%	8.625%	9.25%	9.875%	10.5%

Փորձը ցույց է տալիս, որ բարենպաստ պայմաններում բանկերը պետք է իրենց նորմատիվային կապիտալից ավելի կապիտալ ունենան, որը շուկայում չկանխատեսված տատանումներին պարագայում պետք է բանկին իր ֆինանսական կայունությունը ապահովելու հնարավորություն տա: Սակայն գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ (առնվազն սկզբնական շրջանում) բանկերը շարունակում էին չբաշխված շահույթից շահույթաբաժիններ վճարել:

Այդ խնդիրն հաշվի առնելով՝ BCBS-ն առաջարկել է բանկերի համար սահմանել կապիտալի պահպանման բուժեր, որի նպատակն է բանկերին ստիպել կապիտալի ավելցուկից ստեղծել ֆոնդեր, որոնք հնարավոր կլինի օգտագործել ճգնաժամային իրավիճակներում:

<sup>81</sup> I. Finel-Honigman, F. B. Sotelino “International Banking for a New Century”, Routledge – Taylor & Francis Group, London & New York, 2015, (p 149).

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է, թե ինչպես է աշխատում այդ մեխանիզմը: Ըստ այդ աղյուսակի՝ եթե CET1 կապիտալը կազմում է բանկի ռիսկով կշռված ակտիվների, օրինակ, 5.5%-ը, ապա բանկը պարտավոր է պահպանել իր բոլոր եկամուտների 80%-ը: Իսկ երբ բանկն ունի միայն CET1 կապիտալ, որը կազմում է ռիսկով կշռված ակտիվների 8%-ը, ապա կարելի է ասել, որ բանկը բավարարում է Բազելի III-ի բոլոր նորմատիվներին, սակայն չի կարող 100%-ով բաշխել իր եկամուտները:

**Աղյուսակ 11.** *Կապիտալի պահպանման բոլորի պահանջը*.<sup>82</sup>

CET1/Ռիսկով կշռված ակտիվներ (%)	Կապիտալի պահպանման նվազագույն սահմանաչափը, արտահայտված եկամուտների կառավարման %-ով
4.5% - 5.125%	100%
5.125% - 5.75%	80%
5.75% - 6.375%	60%
6.375% - 7%	40%
>7%	0%

Սրան գումարած՝ BCBS-ն առաջարկում է սահմանել կապիտալի հակացիկլիկ բոլորի, որի հիմնական նպատակը ոչ միայն ճգնաժամերի դեպքում առանձին բանկերի ֆինանսական կայունության ապահովումն է, այլև այդ ժամանակահատվածում տնտեսության իրական հատվածի վարկավորումը հնարավոր դարձնելը՝ առանց բանկերի ֆինանսական կայունությանը վտանգելու:

Յուրաքանչյուր երկրում վարկերի աճը և այլ մակրոտնտեսական ցուցանիշները ինքնուրույն

<sup>82</sup> 68. I. Finel-Honigman, F. B. Sotelino, "International Banking for a New Century", Routledge – Taylor & Francis Group, London & New York, 2015, (p 150).

են հաշվարկվում: Այդ հաշվարկները արդյունքները կարելի է պատկերացում կազմել, ռիսկերի ավելացման մասին: Եթե, օրինակ, պարզվի, որ վարկերն աճում են գերարագ տեմպերով, պատասխանատու մարմինը կարող է ուժի մեջ մտցնել կապիտալի բուժերի պահանջը: Կապիտալի հակացիկլիկ բուժերը կարող է սահմանվել ռիսկով կշռված ակտիվների 0-2.5%-ի չափով՝ հաշվի առնելով համակարգային վտանգների ռիսկերը:

Քանի որ ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման պատճառներից էր բանկերի կողմից մեծ չափերի հասնող հաշվեկշռային և արտահաշվեկշռային լներեջի առկայությունը, BCBS-ը առաջարկել է սահմանել ռիսկերի վրա չհիմնված նոր նորմատիվ՝ լներեջի գործակից: Սրան պատակն է սահմանափակել բանկերի կողմից տրված կապիտալի մակարդակի պայմաններում չափազանց մեծ ծավալների ակտիվների ներգրավումը:

Լներեջի գործակիցն իրենից ներկայացնում է կապիտալի և ակտիվների հարաբերակցություն, որի նվազագույն մեծությունը BCBS-ը սահմանել է 3%:

Ճգնաժամի օրերին ի հայտ եկած խնդիրներից էր իրացվելիության խնդիրը, որն իրենց վրա զգացին մի քանի բանկեր: Այդ խնդիրը լուծելու համար BCBS-ը մշակել է իրացվելիության երկու նոր նորմատիվներ: Այս նորմատիվները հետապնդում են տարբերվող, սակայն միմյանց փոխլրացնող երկու նպատակներ: Նպատակներից մեկը սթրեսային իրավիճակներում բանկի կարճաժամկետ իրացվելիությունն ապահովելն է, մյուսը՝ բանկի իրացվելիությունը երկար ժամկետում ապահովելն է՝ բանկերի համար խթաններ ստեղծելով, որպեսզի իրենց

գործառնու թյունները \$ինանսավորելն ավելի վստահելի և կայուն աղբյուրներին:

Իրացվելի ության կարճաժամկետ նորմատիվի (Liquidity Coverage Ratio - LCR) նպատակը բանկին ապահովելն է բավարար քանակությամբ բարձր իրացվելի ակտիվներով, որոնք արագ կարող են վերածվել կանխիկի և բավարարել բանկի իրացվելի ության պահանջները 30-օրյա սթրեսային իրավիճակի պայմաններում: Սանշանակում է, որ բանկը այնքան բարձր իրացվելի ակտիվներ պետք է ունենա, որ կարողանա 30 օր «դիմանալ», որից հետո ենթադրվում է, որ իրավիճակը ընդհանուր առմամբ շտկված կլինի: Նորմատիվը հաշվվում է բանկի բարձր իրացվելի ակտիվների և 30 օրվա ընթացքում դրամական միջոցների գուտ արտահոսքի հարաբերակցությամբ, որը 1-ից փոքր թիվ չպետք է լինի:

Երկարաժամկետ իրացվելի ության նորմատիվը (Net Stable Funding Ratio - NSFR) մշակվել է բանկերի ակտիվների միջնաժամկետ և երկարաժամկետ \$ինանսավորումը խթանելու նպատակով: Այն սահմանում է կայուն \$ինանսավորման համար նվազագույն պահանջվող գումարը՝ հաշվի առելով ակտիվների և գործառնու թյուններին իրացվելի ության բնութագիրը մեկ տարվա կտրվածքով: Այս նորմատիվի նպատակն է վերականգնել բանկերի ակտիվների \$ինանսավորման կառուցվածքը կարճաժամկետ \$ինանսավորման խնդիրներին՝ հասցնելով ավելի կայուն և երկարաժամկետ \$ինանսավորման: Նորմատիվը հաշվվում է կայուն \$ինանսավորման առկա գումարի և կայուն \$ինանսավորման պահանջվող գումարի մեծ ությունների հարաբերակցությամբ, որը պետք է 1-ի նմեծ թիվ լինի:

Նախորդ մասերում մենք մի քանի անգամ հիշատակել ենք "Too big to fail" բանկերի ֆենոմենը, երբ բանկերը հասնում են ակտիվների մեծությամբ և ազդեցության այնպիսի չափերի, որ խնդիրների առաջացման դեպքում կառավարությունները ամեն ջանք գործադրում են այդ բանկերին կոլապսից փրկելու համար, քանի որ ընդունված է կարծել՝ դրանց անկումը իր հետևից առավել մեծ բացասական հետևանքներ կբերի: Սակայն պարադոքսն այն է, որ այդ խոշոր բանկերը՝ վստահ լինելով, որ խնդիրների դեպքում կառավարությունը իրենց սատար է կանգնելու, սկսում են ռիսկային գործունեություններ ծավալել, ինչի պատճառով էլ ստեղծվում է ճգնաժամային իրավիճակ: Այդ պատճառով BCBS-ը կազմել է և՛ գլոբալ, և՛ տեղական համակարգային նշանակություն ունեցող բանկերի (Systematically important banks - SIB) ցանկ: Նաև BCBS-ը մշակել է այդ բանկերի համարյուրահատուկ անվտանգության պահանջներ, որպեսզի ապագայում նախկինի նման բանկերը գլոբալ կամ տարածաշրջանային ճգնաժամերի պատճառ չդառնան:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) գնահատականների համաձայն՝ Բազել III-ից բխող կարգավորման խստացված պահանջների պատճառով բանկերի վարկային և ավանդային տոկոսադրույքների սփրեդը մոտակատարիներին կավելանա 0.15%-0.5%, ինչը կդանդադեցնի գլոբալ տնտեսական աճը մոտ 0.05%-0.15%-ով: Ոմանք դաքննադատում են՝ ասելով, որ հենց խստացող բանկային վերահսկողության պատճառով է, որ ճգնաժամից հետո համաշխարհային տնտեսության վերականգնումը դանդաղ է ընթանում: Բազել III-ի պաշտպաններն էլ հակադարձում են՝ նշելով, որ

վերջին գլոբալ ճգնաժամի պատճառը հենց թույլ կարգավորումներն էին:

Հայաստանը վերջնականապես անցել էր Բազել II ստանդարտներին 2007 թ., որից հետո սկսեց մի քանի տարի Բազել III-ի ստանդարտներին ներդրման գործընթացը՝ հիմնականում ավարտելով 2015 թ.: Հայաստանում հատկապես մեծ ուշադրություն գրավեց բանկերի կապիտալի նվազագույն պահանջը 5 մլրդ դրամից 30 մլրդ դրամ բարձրացումը, որի նպատակն էր երկարաժամկետում բանկային համակարգի կայունությունն երաշխիքների ապահովումն ու տնտեսության սպասարկման ունակությունների բարձրացումը: Դրան հետևած միաձուլումների արդյունքում Հայաստանի 21 բանկերից մնացին 17-ը, իսկ կանոնադրական կապիտալը ընդհանուր առմամբ համալրվեց 168 մլրդ դրամով:

Այս և մյուս բազելյան կարգավորումների կիրառումը կհանգեցնի ոչ միայն Հայաստանի բանկային համակարգի կայունության ամրապնդմանն ու անվտանգության բարձրացմանը, այլև կնպաստի համաշխարհային բանկային համակարգին հայկական բանկերի ինտեգրվելու գործընթացին:

Հայաստանի բանկային համակարգի հետագա զարգացման վրա կարող է ազդեցություն ունենալ նաև Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ)՝ հաշվի առնելով այն փաստը, որ ԵԱՏՄ անդամ պետությունները նույնպես հանձն են առել իրենց բանկային համակարգերը բարեփոխել համաձայն Բազել III-ի սահմանած չափանիշներին: Սակայն, եթե խոսքը գնում է ԵԱՏՄ ավելի արդյունավետ երևույթի մասին, առնվազն բանկային համակարգերը պետք է

որոշ ներդաշնակություն գնան: Իսկ դրա կարիքը  
զգացվում է, քանի որ հինգ անդամ երկրների  
համակարգերի միջև կան լուրջ  
տարբերություններ:

ԵԱՏՄ անդամ երկրների բանկային  
համակարգերից ամենազարգացածը համարվում է  
Ռուսաստանի բանկային համակարգը, որը  
մյուսներին գերազանցում է բանկերի քանակով,  
ակտիվների մեծությամբ և կարգավորման  
հնարավորություններով: Վերջին տարիներին  
բանկերի քանակը Ռուսաստանում կտրուկ նվազել է  
մի շարք բանկերի լիցենզիաներից զրկվելու  
պատճառով: Այսպես, թե 2015թ. Ռուսաստանում կար 834  
բանկ, ապա 2018թ. դրանց թիվը նվազել էր՝ հասնելով  
561-ի: Չնայած որ մի շարք օտարերկրյա բանկեր  
լքեցին երկիրը պատժամիջոցների պատճառով,  
օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը բանկային  
համակարգի համախառն կանոնադրական  
կապիտալում կազմում է 16.57%: Ոչ միայն  
պատժամիջոցներից առաջացած ճգնաժամը, այլ նաև  
համակարգային թերությունները հանգեցրին  
բանկային կապիտալի արտահոսքին, այդ թվում  
դեպի ԵԱՏՄ երկրներ:

Ի տարբերություն Ռուսաստանի, ԵԱՏՄ մյուս  
չորս երկրների բանկային համակարգերը իրար  
համադրելի են: Երկրներից ոչ մեկում բանկերի  
քանակը չի գերազանցում 30-ը: Բանկերի ակտիվների  
հարաբերակցությունը ՀՆԱ-ին 50%-ից ավելի է՝  
բացառությամբ Ղրղզստանի, որտեղ բանկային  
ակտիվներ - ՀՆԱ հարաբերակցությունը 38.8% է:<sup>83</sup> Սա  
միակ տարբերությունը է: Ակնհայտորեն տարբեր  
է նաև առևտրային բանկերի մեջ պետական  
կապիտալով գործող բանկերի ներկայությունը:

<sup>83</sup> Стародубцева Е.Б. «Реформирование банковских систем стран ЕАЭС в преддверии создания единого  
финансового рынка», Москва, Россия, 2018 г, (с. 2-8)

Բեւելառուսում պետական բանկերի մասնաբաժինը բանկերի կանոնադրական կապիտալում 2018 թ. կազմել է 81.4% այն դեպքում, երբ ոչ ռեզիդենտների մասնաբաժինը կազմել է 15.9%<sup>84</sup>, այսինքն՝ այս երկրում գրեթե բացակայում է տեղական, մասնավոր բանկային կապիտալը: Ռուսաստանում և Ղազախստանում պետական մասնակցությամբ առևտրային բանկերի կանոնադրական կապիտալում ավելի փոքր է: Հայաստանում և Ղրղզստանում պետական մասնակցությամբ առևտրային բանկերի կանոնադրական կապիտալներում լիովին բացակայում է:

**Աղյուսակ 12.** *ԵԱՏՄ անդամ երկրների բանկային համակարգերի զարգացման ցուցանիշների համեմատական բնութագրերը*<sup>85</sup>

Երկիր	Բանկերի քանակ	Օտար երկրյա մասնակցությամբ բանկեր	Բանկային ակտիվներ /ՀՆԱ	Վարկեր /ՀՆԱ
Հայաստան	17	15	78.2%	48.8%
Բեւելառուս	24	14	68%	22.4%
Ղազախստան	28	13	58%	26.4%
Ղրղզստան	25	17	38.8%	21.7%
Ռուսաստան	561	174	96%	52.7%

*Հարուսակություն*

Հայաստանում և Ղրղզստանում բոլոր բանկերը նաև ունիվերսալ են, մինչդեռ մյուս երկրներում գործում են ըստ ոլորտների մասնագիտացած բանկեր:

<sup>84</sup> Национальный банк Республики Беларусь. «Банковский сектор Республики Беларусь», Минск, 01.04.2018 г, (с 3)

<sup>85</sup> Կազմվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով համապատասխան երկրների կենտրոնական բանկերի տվյալների վրա:



ԵԱՏՄ երկրների ընդհանուր հատկանիշ է ավանդների ապահովագրումը և արժեթղթերի շուկայում ներդրողների կորուստների փոխհատուցման բացակայությունը: Տարբերությունն այն է, որ, բացի Բելառուսից, մյուս երկրներում ավանդները ապահովագրվում են մինչև որոշակի դրամային շեմ, իսկ Բելառուսում լիովին ապահովագրվում են բոլոր չափերի ավանդները:

ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներում բարձր է բանկային ակտիվների և պասիվների կենտրոնացումը: Խոշոր հինգ բանկերին բաժին հասնող ակտիվների մեծությունը բոլոր երկրներում տատանվում է 52%-59% սահմաններում: Բացառություն է Բելառուսը, որտեղ այդ ցուցանիշը հասնում է 79%:

Չարկավոր է նշել, որ ներկա պայմաններում դեռ վաղ է խոսել բանկերի՝ մյուս երկրների բանկային հատվածներում լուրջ ներգրավվածության մասին: Սա ապագայի հարց է, երբ լուծված կլինեն բանկային կարգավորումների հետ կապված բոլոր հարցերը: Այնուամենայնիվ, ներկայումս առանձին երկրների կենտրոնական բանկերը պատրաստ են ակտիվացնել իրենց ջանքերը միասնական բանկային շուկայի ստեղծման համար՝ նոր վերագրային կարգավորիչի օգնությամբ, ինչպես նաև ձևավորել միասնական իրավական հիմքեր \$ինանսական հաստատությունների գործունեության համար: Այս նպատակով անհրաժեշտ է ոչ միայն վերացնել բանկային ծառայությունների մատուցման մակարդակների և դրանց կարգավորման հարցերում առկա տարբերությունները, այլև լուծել առկա

խնդիրները: Առաջին հերթին անհրաժեշտ է  
ուշադրություն դարձնել բանկերի  
հարմարեցմանը առանձին երկրների  
տնտեսությունների կարիքներին, \$ինանսական  
համակարգի բանկային և ոչ բանկային հատվածների  
հավասարակշռված զարգացմանը (ներառյալ ոչ  
բանկային, այլ \$ինանսական միջնորդների  
գործունեությունը): Միևնույն ժամանակ կարևոր  
է, որ որոշ երկրներում պետական կապիտալը  
բանկերում սկսի փոխարինվել մասնավորով:  
Բանկային ոլորտում օրենսդրության և  
կարգավորման քաղաքականության  
ներդաշնակեցումը կբարձրացնի նրա նկատմամբ  
վստահությունը, այն կդարձնի ավելի մատչելի, և  
կբերի բանկային ծառայությունների  
դիվերսիֆիկացմանը: Անհրաժեշտ է բանկային  
գործունեության հիմնական սկզբունքներն ու  
կարգավորման նորմերը միավորել, մշակել  
բանկային գործունեության կենսափուլը  
կարգավորող միասնական մեխանիզմներ՝ սկսելով  
լիցենզավորումից և ավարտելով սնանկացման  
ընթացակարգերից, ինչը կնպաստի հարևան  
շուկաներում բանկերի փոխկապակցման  
ընդլայնմանը: Բացի այդ, կարևոր է նաև բանկային  
գործունեությունը բարեփոխումների  
ենթարկելը՝ վերացնելով խնդիրները, որոնք  
հիմնականում կապված են վարկավորման հետ: Դա  
թույլ կտա տնտեսության տարբեր ոլորտներում  
իրականացնել հավասարակշռված վարկավորում,  
այլ ոչ թե միայն սպառողական վարկեր տրամադրել  
առևտրի ոլորտում: Բարելավել ներդրումային և  
\$ինանսական միջավայրը՝ կենտրոնանալով  
բանկային հատվածի կապիտալիզացիայի և  
\$ինանսական կայունության բարձրացման վրա,  
ինչպես նաև Բազել III-ի աստիճանական ներդրման

վրա: Իսկ Բազել III-ի ներդրման գործընթացը տարբեր  
երկրներում գտնվում է տարբեր մակարդակների  
վրա:

Տարածաշրջանային ինտեգրացիոն  
միավորումներին անդամակցելիս երկրին  
հարկավոր է նախօրոք սահմանել այն «կարմիր  
գիծը», որը թույլ կտա փոխշահավետ  
համագործակցությունը տարանջատել  
ինքնիշխանություն կորստից: Փոխշահավետ  
համագործակցությունը ներառում է  
կարգավորումների և պայմանների մոտեցում, որը  
երկրներին թույլ է տալիս իրենց տնտեսական  
փոխհարաբերությունները ծավալել «խաղի»  
ընդհանուր կանոնների շրջանակում: Սակայն, երբ  
խոսքը տարածաշրջանային միասնական վերահսկող  
և կառավարող ինստիտուտների ստեղծման մասին է,  
ինչպես օրինակ՝ Եվրոպական կենտրոնական  
բանկը, ապա այստեղ արդեն գործ ունենք երկրի  
ինքնիշխանություն սահմանափակման հետ:

Այսպիսի խորը ինտեգրացում պարունակող  
տարածաշրջանային միավորումները կարելի է  
համարել ևս մեկ աստիճան, որը թույլ կտա հասնել  
հիպերգլոբալացման կամ արհեստական  
գոլբալացման, ինչին մենք անդրադարձել ենք  
աշխատություն անաջին գլխում:<sup>86</sup>

Մեր կարծիքով, մեր կողմից հավանություն  
արժանացած բնական գլոբալացմանը ավելի շատ  
համապատասխանում են գլոբալ մակարդակում  
ընդունված կարգավորումները և  
համաձայնագրերը, որոնք հենց հաստատում են  
«խաղի» միասնական կանոններ՝ առանց տարբեր  
երկրների տնտեսական ինստիտուտների

<sup>86</sup> A. Subramanian and M. Kessler: “The Hyperglobalization of Trade and Its Future”. Global Citizen  
Foundation, Working Paper 3, 2013, (pp. 17-20).

մի աճ ու լ ու մ ը պարտադրել ու : Բ ազ ե լ III-ը այ դ  
տե ս ա կ ի հ ա մ ա ձ ա յ ն ա գ ռ ե թ ի լ ա վ ա գ ու յ ն  
օ թ ի ն ա կ ն ե թ ի ց է :

### **3.2 Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Չ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ւ Մ Օ Տ Ա Ր Ե Ր Կ Ր Յ Ա Բ Ա Ն Կ Ե Ր Ի Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ե Ռ Ա Ն Կ Ա Ր Ն Ե Ր Ը**

Տ ն տե ս ա գ ե տ ն ե թ ի մ ի ջ և հ ա ճ ա խ ե ն տե դ ի  
ու ն ե ն ու մ ք ա ն ա վ ե ճ ե թ ա յ ն հ ա թ ց ի շ ու ը , թ ե  
տ ն տե ս ա կ ա ն ա ճ ի հ ա մ ա թ առ ա ջ ն ա յ ի ն  
ն շ ա ն ա կ ու թ յ ու ն ու ն ի կ առ ա վ ա թ ու թ յ ա ° ն վ ա թ ա ծ  
տ ն տե ս ա կ ա ն ք ա դ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն ը , թ ե °  
կ ե ն տր ո ն ա կ ա ն ք ա ն կ ի վ ա թ ա ծ դ թ ա մ ա վ ա թ կ ա յ ի ն  
ք ա դ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն ը : Մ ե թ կ ա թ ծ ի ք ո վ  
տ ն տե ս ու թ յ ա ն մ ե ջ ի թ ա կ ա ն , ա թ մ ա տ ա կ ա ն  
ք ա թ ե փ ո խ ու մ ն ե թ կ ա տ ա թ ե լ ու հ ա մ ա թ ա ն հ թ ա ժ ե շ տ է ,

որ այդ երկու քաղաքականությունները գործեն  
գուգահեռաբար՝ մեկը մյուսին փոխլրացնելով:  
Տնտեսական աճ նշանակում է տնտեսվարողների  
գործունեության ակտիվացում և նրանց քանակի  
աճ: Այդ պարագայում տնտեսությանն օդի պես  
անհրաժեշտ են մասնավոր բանկերի վարկերը և  
ներդրումները: Դրա համար անհրաժեշտ է, որ  
բանկային համակարգը երկրի տնտեսությունից  
մեկ քայլ առաջ լինի, որպեսզի կարողանա  
իրականացնել այդ գործունեությունը: Իսկ մեկ  
քայլ առաջ գտնվելու համար հարկավոր է, որ երկրի  
բանկային համակարգը միջոցներ ներգրավի  
արտասահմանից: Չնայած որ Հայաստանի  
Հանրապետությունը վաղուց արդեն դադարել է  
վարչահրամայական տնտեսությամբ երկիր լինել և  
1991 թ-ից սկսած գտնվում է ազատ շուկայական  
տնտեսություն կառուցելու գործընթացի մեջ,  
հնարավոր չէ չնկատել, որ վերջին տարիներին  
Հայաստանը հայտնվել էր լճացման մեջ:  
Տնտեսության մեջ կոռուպցիոն երևույթները և  
զարգացման հստակ տեսլականի բացակայությունը  
հանգեցրել էին նրան, որ Հայաստանը  
անկախացումից քսանյոթ տարի անց դեռ չէր  
դադարել անցումային տնտեսությամբ երկիր  
համարվել: Բայց կարելի է համարել, որ 2018 թ-ից  
սկսած Հայաստանում սկսվել է նոր, արմատական  
փոփոխությունների ժամանակաշրջան:  
Բնականորեն, պետք է ակնկալել, որ արմատական  
փոփոխությունները լինելու են նաև  
տնտեսության մեջ:

Այս պարագայում, ի տարբերություն 1991թ.,  
գոյություն ունի մեկ առավելություն: Այս  
անգամ Հայաստանի նոր իշխանությունները չեն  
ժառանգել փլուզվող խորհրդային համակարգ, որի  
փոխարեն հարկավոր է նորը ստեղծել՝

օրենսդրությունը և համապատասխան  
ինստիտուտները հաստատելով: Իրականում նրանք  
գործունեն շուկայական ազատական կարգերով մի  
համակարգի հետ, որն ուղղակի ինքն իր նպատակին  
դեռ չի ծառայել: Փաստացի, Յայաստանի  
Յանրապետության նոր կառավարության հիմնական  
առաքելությունը վաղուց հաստատված համակարգը  
աշխատեցնելն է:

Ակնկալվում է, որ երկրի տնտեսության արդեն  
գոյություն ունեցող ոլորտների համար իրենց  
արդյունավետությունը բարձրացնելու նոր  
հնարավորություններ են ստեղծվելու: Այդ  
նպատակով կառավարության ապագա ծրագրերի մեջ  
յուրահատուկ տեղ է զբաղեցնում տնտեսության  
մեջ մենաշնորհների վերացումը, մրցակցության  
պաշտպանությունը և բոլոր տնտեսվարողների  
համար հավասար պայմանների ապահովումը: Նաև  
նշվում է, որ պայքար է մղվելու տնտեսության  
սովետայնության դեմ, ինչը թույլ կտա կարգի  
բերել պետական եկամուտերը:

Այս ամենին սովորաբար տրամաբանորեն  
հետևում է ընկերություն գրանցելու և նոր  
ծեռներեցություն սկսելու գործընթացների  
դյուրինացումը և ընդհանրապես  
տնտեսությունում կոռուպցիայի վերացումը:

Քանի որ վերջին տարիներին Յայաստանը  
գտնվում էր խորը տնտեսական ճգնաժամի և  
համընդհանուր լճացման մեջ, նոր  
բարեփոխումների առաքելությունը չի կարող  
սահմանափակվել գուտիրավիճակի կայունացմամբ:  
Երկրին հարկավոր է թռիչքաձև աճ և տնտեսության  
արագ տրանսֆորմացիա, ինչի շնորհիվ տաս տարի  
անց Յայաստանը զարգացող երկրի կարգավիճակը  
(որը չեզոք արտահայտություն է զարգացման ցածր

մակարդակ ունեցող երկրներին նշելու համար) կփոխարինի արագ զարգացող երկրի կարգավիճակով: Ընդհանրապես արագ զարգացող երկրները դրանք այն երկրներն են, որոնք վերջին մեկ-երկու տասնամյակում իրենց սոցիալ-տնտեսական ցուցանիշներում նշանակալի թռիչք են արձանագրել, բայց դեռևս չեն հասել զարգացած երկրների մակարդակին: Այդ երկրներին անվանում են նաև «Նոր ինդուստրիալ երկրներ», որովհետև նրանց տնտեսական հաջողությունը ներկայումս ավորված են մեծաքանակ էժան աշխատուժի և խթանող տնտեսական քաղաքականության համադրման շնորհիվ զարգացած երկրներից վերամշակող արտադրություններն իրենց մոտ տեղափելով: Հայաստանը իր չափերի և փոքր աշխատուժի պատճառով չի կարող «Նոր ինդուստրիալ երկիր» դառնալ: Սակայն այն ունի բոլոր նախադրյալները «Նոր հետինդուստրիալ երկիր» դառնալու համար: Իսկ այդ հարցում մեծ դեր է վերապահված բանկերին: Քանի որ տնտեսությունում ավանդներից ձևավորված բանկային կապիտալն այն մակարդակի վրա չի գտնվում, որը թույլ կտա բանկերին լիարժեք \$ինանսավորել տնտեսությունը, անհրաժեշտ է օտարերկրյա բանկային նոր կապիտալ ներգրավել:

Հայաստանի Հանրապետության արագ զարգացման գործում մասնավոր բանկերը կարող են խաղալ միջնորդի դեր. ներդրում անել ցանկացող պետական և մասնավոր հաստատություններին և տնտեսվարող սուբյեկտների միջև: Այն պարագայում, երբ պետք է \$ինանսավորվի ոչ թե ինչ-որ մեկ առանձին ծրագիր, այլ տնտեսության մի ամբողջ ոլորտ, ուղղակի ներդրումները արդեն միշտ չէ, որ կարող են բավարարել անհրաժեշտ միջոցների ներկայությունը: Ինքնըստինքյան

տնտեսությունն ուղիղ ֆինանսավորման հարցը դառնում է բանկային համակարգի գործունեությունների շրջանակի մի մաս: Իսկ պետությունը դերակատարությունը լինելու է.

1. կառավարությունը ծրագրերի միջոցով համապատասխան ոլորտների վարկավորման պարագայում տոկոսադրույքի սուբսիդավորելը,
2. կենտրոնական բանկի միջոցով մասնավոր բանկերին ուղղորդելը վարկավորելու համապատասխան ոլորտներ, ինչպես նաև պարտադիր պահուստային նորմի և վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցման միջոցով բանկային վարկերը էլավելի գրավիչ դարձնելը:

Այստեղ է, որ կարող է զգացվել օտարերկրյա բանկային կապիտալի կարիքը: Նամանավանդ որ Յայաստանի բանկային համակարգը տնտեսության այս կամ այն ոլորտը ֆինանսավորելու համար միջազգային վարկային կազմակերպություններից գումարներ գրավելու փորձարդեն ունի:

Ընդհանրապես, տնտեսական բարեփոխումների հարցում, մեր կարծիքով, Յայաստանի ներկա իրավիճակում առավել նպատակահարմար է շարժվել հետպատերազմյան Արևմտյան Գերմանիայի (ԳԴՀ) տնտեսական բարեփոխումների հայր՝ Լյուդվիգ Էրհարդի սկզբունքներով: Դրանցից ամենահիմնարարներն են.

1. Այնքան ազատ շուկա որքան հնարավոր է, և միայն այնքան պետական միջամտությունն որքան հնարավոր է:
2. Տնտեսական մաքսիմալ ազատության ապահովումը տնտեսությունում



մրցակցության մաքսիմալ պաշտպանության հետզուհե 87:

XX դարի երկրորդ կեսի ԳԴՀ-ի և մեր օրերի Յայաստանի միջև տարբերությունն այն է, որ զարգացման համար անհրաժեշտ կապիտալը ԳԴՀ-ն ստանում էր ԱՄՆ-ից «Մարշալի պլանի» շրջանակներում: Յայաստանը, չմասնակցելով այդպիսի շռայլ օգնության ծրագրի, կարող է իր կապիտալի բացը և րացանել միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկերի ավելացմամբ: Սակայն, հաշվի առնելով Յայաստանի արտաքին պարտքի չափերը, նպատակահարմար չէր լինի մեծ քանակությամբ նոր վարկեր վերցնել: Մնում է բանկային համակարգը, երբ մասնավոր առևտրային բանկերը կապիտալ են ներգրավում արտերկրից: Օտարերկրյա կապիտալ ներգրավելու այդ ճանապարհն առավել արդյունավետ է, քան ի որ այս պարագայում մասնավորը ֆինանսավորում է մասնավորին, իսկ պետության դերը լինելու է այդ պրոցեսի ընթացքում շուկայական մեխանիզմների մաքսիմալ արդյունավետության ապահովումը:

Մասնավանդ եթե ուսումնասիրենք 2019 թ. ՅՅ կառավարության ծրագրի՝ տնտեսությանը վերաբերող հատվածները, ապա պարզ է դառնում, որ տնտեսության զարգացման հիմքը առաջին հերթին հանդիսանալու է մասնավոր նախաձեռնությունը 88: Փաստորեն, կառավարությունը վերջնականապես հաստատում է, որ տնտեսության նկատմամբ որդեգրելու է գուտ կարգավորիչ և իրավարար դերակատարություն: Այդ մոդելը կարելի է համադրել երկրի բանկային համակարգում գործող մոդելի հետ, որտեղ պետության դերը

<sup>87</sup> L. Erhard "Prosperity Through Competition", Ludwig von Mises Institute, Bonn, 1957, (pp 46-60)

<sup>88</sup> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր». 8 փետրվարի 2019. (Էջ 39-52) - <http://www.gov.am/files/docs/3133.pdf>

սահմանափակվում է Կենտրոնական բանկի կարգավորիչ գործունեությամբ, իսկ գուտ շուկայական գործունեությամբ արդեն զբաղվում են մասնավոր ընկերությունները:

Ինչ վերաբերում է բանկերին՝ Յայաստանի նահրաժեշտ է խորացնել ինտեգրումը համաշխարհային բանկային համակարգի մեջ՝ դրանից մաքսիմալ շահույթ ձեռք բերելու համար: Երկրում միջազգային բանկերի ներկայության կարևորությունը հենց նրանում է, որ այդ բանկերը գրեթե միշտ իրենց թիկունքում ունեն հզոր ֆինանսական կազմակերպություններ, որոնք միշտ պատրաստ են օժանդակել իրենց դուստրերին դժվարություններին հաղթահարման ժամանակ: Մայր բանկերը իրենց դուստրերին, անհրաժեշտության դեպքում, կարող են օգնել ընդլայնվել շուկայի ներսում: Նաև մեծ է միջազգային բանկերի դուստրերի դերը բանկային նոր տեխնոլոգիաների և բանկային ծառայությունների մատուցման նոր ձևերի ներմուծման և տարածման մեջ:

Սակայն, ինչպես տեսնում ենք մեր երկրի փորձից, միջազգային բանկային հաստատությունները դեռևս չեն շտապում Յայաստանում լուրջ գործունեություն ծավալել: Նախորդ հատվածներում մենք ուսումնասիրեցինք Յայաստանի բանկային համակարգի առանձնահատկությունները և նրանով ժողովուրդը կողմերը: Հիմնական թուլյա կողմերից է ցածր եկամտաբերությունը, որի պատճառն, ընդհանուր առմամբ, մինչև վերջին ժամանակները գործած տնտեսական ցածրակտիվությունն էր:


Հարցին իրատեսական մոտեցում ցույց տալու դեպքում պետք է ընդունենք, որ թե՛ բանկային համակարգում, թե՛ տնտեսությունում արմատական

փոփոխություններ կատարելու համար  
շրջադարձային էլիսեյնո 2019 թ.: Բանկային  
համակարգում պոտենցյալ ներդրող հանդիսացող  
միջազգային բանկային կազմակերպությունները  
այս ժամանակահատվածում ուշադրությամբ  
կհետևեն, թե արդյո՞ք իրականացվող տնտեսական  
բարեփոխումները հասնում են իրենց նպատակին,  
արդյո՞ք տնտեսություն - բանկային համակարգ  
կապը սկսում է արդյունավետության նշաններ  
ցույց տալ: Մեր կարծիքով, այդ  
ժամանակահատվածում հատկապես  
ուշադրությունը մեծապես սկեռվելու է HSBC  
Յայաստան բանկի գործունեության մեջ տեղի  
ունեցող զարգացումների վրա: Քանի որ սույն  
բանկը ոչ միայն միջազգային է, այլ նաև  
հանդիսանում է ամենահայտնի գլոբալ  
ֆինանսական կազմակերպություններից մեկը:  
Միջազգային բանկերի համար հենց նրա փորձի  
ուսումնասիրությունն էլիսեյնո անցքային:  
Այս պահի դրությամբ տպավորությունն  
այնպիսին է, որ HSBC Յայաստան բանկը վարում է  
սպասողական քաղաքականություն: Միայն  
մայրաքաղաքում գործող ինը մասնաճյուղերով  
գործունեությունը և համընդհանուր բանկային  
ակտիվներում ընդամենը 3.9% մասնաբաժինը կարող է  
լավ ցուցանիշ համարվել տեղական նորաստեղծ  
որևէ բանկի համար, բայց ոչ գլոբալ տարածում  
ունեցող ազդեցիկ բանկային խմբի  
ներկայացուցչի համար: Իսկ այդպիսի իրավիճակի  
ի հայտգալու պատճառների մասին մենք խոսել ենք  
նախորդ գլխում: Միջազգային բանկերի  
դուստրերը իրենց ռիսկերը նվազեցնելու  
նպատակով ավելի բծախնդիր են հաճախորդների  
եկամտաբերության մասին տվյալների  
թափանցիկության նկատմամբ:

Ինչպես ս գիտենք, Յայաստանի տնտեսությունում նախկինում մեծ դեր էր խաղում ստվերը: Ստեղծվել էր այնպիսի դրություն, երբ բավական վճարունակ ֆիզիկական և իրավաբանական անձիք ի վիճակի չէին լինում վարկ ձևակերպել կամ միջոցների ավելցուկը ավանդների տեսքով տեղադրել բանկերում: Չմոռանանք, որ գործընթացը ավելի է ակտիվանալու, եթե տեղի ունենա հարկային նոր օրենսգրքի ընդունումը, որով սահմանվելու է ցածր, համահարթ հարկադրույթ: Դրան գումարած, բավական լավ արդյունքների կգրանցվեն, եթե վերացվեն բիզնեսի ստեղծմանը և ընդլայնմանը խոչընդոտող բյուրոկրատական մեխանիզմները, իսկ բյուրոկրատական հաստատությունները առհասարակ օպտիմալացվեն:

Աշխատաշուկայի և ձեռնարկությունների ֆինանսների ապաստվերայնացման հարցի կարգավորումը, մեր կարծիքով, ինքն իրենով չի հանդիսանում բանկային համակարգի խնդիրների ունիվերսալ լուծում, սակայն այն կարող է առաջին կայծը լինել, որը անհրաժեշտ ազդակ կհաղորդի ողջ տնտեսության իրական հատված - բանկային համակարգ շղթային:

**Գծապատկեր 30.** *Տնտեսությունն իրական հատված - բանկային համակարգ շղթա.*



Ծղթայի ակտիվության ողջ ընթացքում նրա գործունեությունը անուղղակիորեն արագացնելու են տնտեսությունում բարեփոխումների իրականացումից առաջացած դրական արդյունքները:

Այս գործընթացի ապահովման համար բարենպաստ պայմանների ստեղծումն էլ իր հերթին կհանդիսանա այն ազդակը, որը կնպաստի դեպի Հայաստանի բանկային համակարգ եկող օտարերկրյան երդրումների ակտիվացմանը:

Եթե ուզում ենք իմանալ, թե ինչպիսին է լինելու օտարերկրյա ծագումով բանկերի գործունեության ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա, ապա պետք է անդրադառնանք ոչ վաղ անցյալում համադրելի երկրների փորձին: Մեր կարծիքով Հայաստանի հետ զուգահեռներ անցկացնելու համար ամենահավանական թեկնածուները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) նախկին սոցիալիստական երկրներն են: Հատկապես այն ժամանակահատվածում, երբ այդ երկրները դեռևս

ԵՄ անդամ չէին հանդիսանում, սակայն նրանց տնտեսություններում օտարերկրյա բանկերի դուստրերը արդեն լուրջ ակտիվություն էին ծավալում: Հայաստանի և ԿԱԵ երկրների փորձի հիմնական տարբերությունն այն է, որ ԿԱԵ երկրներում օտարերկրյա բանկերի ներթափանցումը և ակտիվացումը համընկել են տնտեսության սոցիալիստական մոդելից շուկայական մոդելին անցում կատարելու ժամանակահատվածում: Արդյունքում այս խմբի երկրներից մի քանիսում (հատկապես մերձբալթյան երկրներում) գրեթե ողջ բանկային համակարգը սկսեց վերահսկվել օտարերկրյա բանկերի դուստրերի կամ մասնաճյուղերի կողմից: Եվ ընդհակառակը, եղել են երկրներ (օր.՝ Լեհաստան, Սլովենիա), որտեղ օտարերկրյա բանկերի ներթափանցման ֆունկցիոնալ տեղական բանկեր պահպանել են իրենց ազդեցիկ դիրքերը, սակայն այդ բանկերը հիմնականում եղել են պետական: Տարիներ անց, տնտեսական իրավիճակի կայունացումից հետո, այդպիսի բանկերի մեծ մասը մասնավորեցվել է և բաժնետոմսերը հիմնականում ձեռք են բերել արդեն ռեզիդենտներին<sup>89</sup>:

Հայաստանի բանկային համակարգը մասնավորեցման և շուկայական ինստիտուտների ներդրման կարիք չունի: Այն լիովին մասնավոր է, սակայն ինչպես նշել էինք վերևում երկրի տնտեսության վերաբերյալ, խնդիրն արդեն գործող համակարգի արդյունավետության բարձրացման մեջ է:

Ինչպիսի՞ պատկերի առջև է կանգնելու Հայաստանյան շուկա մուտք գործել ցանկացող

<sup>89</sup> Export.Gov “Poland - Banking Systems”, 2018 - <https://www.export.gov/article?id=Poland-Banking-Systems> 150

օտարերկրյա կամայական բանկը: Կարող ենք ասել, որ հայաստանյան բանկերն, ըստ իրենց ազգային պատկանելիության, կարելի է բաժանել երեք խմբերի.

1. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին պատկանող բանկեր. այս բանկերը շատ հաճախ ունենում են օտարերկրացի բաժնետերեր, սակայն նրանց բաժնետոմսերի մեծամասնությունը նրանց չի պատկանում:
2. Օտարերկրյա համարվող բանկեր, որոնք որևէ օտարերկրյա բանկի դուստր բանկ չեն հանդիսանում, սակայն որոնց սեփականատերերը այլ երկրների ռեզիդենտներ են: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս բանկերը պատկանում են կա՛մ սփյուռքահայ կապիտալին, կա՛մ օձորներում գրանցված ընկերություններին (կամ միաժամանակ երկուսին էլ):
3. Օտարերկրյա բանկեր, որոնք հանդիսանում են արտերկրում գործող բանկերի դուստրեր: Այս խմբի բանկերը Հայաստանում ամենաթույլ ներկայություն ունեցող բանկերն են, սակայն ողջ աշխատանքի ընթացքում «օտարերկրյա բանկ» ասելով, մենք նկատի ենք ունեցել բանկերի հենց այս տեսակը:

Հայաստանում օտարերկրյա բանկերի դուստրերի ակտիվությունը բարձրացնելու մի քանի ճանապարհ կա: Նախ, արդեն գործող չորս բանկերի մայր կազմակերպությունները կարող են միջոցներ ուղղորդել դեպի իրենց հայաստանյան դուստրերը, որի արդյունքում վերջիններս կկարողանան ընդլայնել մատուցվող

ծառայություններին ծավալը, և իրենց գործունեության աշխարհագրությունը: Ինչպես հիշում ենք, օտարերկրյա բանկերի դուստր չորս բանկերից միայն մեկն է, որ մասնաճյուղեր ունի նաև մարզերում:

Օտարերկրյա բանկերը Հայաստանում կարող են նոր դուստր բանկ հիմնել «գրոյից» (“Greenfield”): Այս պարագայում, եթե ևս մեկ անգամ ուշադրություն դարձնենք Գծապատկեր 21-ին, կտեսնենք, որ այնտեղ կատարված հետազոտության համաձայն, Հայաստանը իր տնտեսության չափերի համեմատ նույնիսկ գերհագեցած է բանկերով:

Այսպես, մնում է մեր կարծիքով ամենաօպտիմալ տարբերակը, այն է՝ արդեն գործող բանկերի բաժնետոմսերի ձեռքբերումը: Նշենք, որ հաշվի առնելով ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի փորձը, կարելի է ասել, որ օտարերկրյա բանկին միշտ է, որ անհրաժեշտ է վերահսկել բաժնետոմսերի մեծ մասը, որպեսզի կարողանա որոշիչ ազդեցություն ունենալ բանկի քաղաքականության վրա:

Առանց թերագնահատելու Հայաստանի ռեզիդենտների և սփյուռքահայերի կողմից դեկավարվող բանկերի գոյություն և հետագա զարգացման կարևորությունը՝ պետք է նշել, որ այս պահին առաջնային անհրաժեշտությունը գլոբալ և տարածաշրջանային բանկերի ներգրավումն է հայկական բանկային համակարգի մեջ: Այդ անհրաժեշտությունը թելադրվում է ոչ միայն գլոբալ և տարածաշրջանային բանկերի ֆինանսական հնրավորություններով, ինչի մասին նշել է ինք վերևում, այլ նաև բանկային գործունեությունը վերաբերող տեխնիկական և աշխատանքային ինովացիաներով, որոնք այդ բանկերը կարողանում են արագ ներմուծել իրենց



Երկրներից: Պետք է արձանագրել, որ բանկային ծառայությունները օպտիմալացնող ինովացիաները Հայաստան են հասնում մի քանի տարին շացումով:

Վերադառնալով ԿԱԵ երկրների փորձի ուսումնասիրությանը՝ հետաքրքիր է, թե ինչպիսին է եղել օտարերկրյա բանկերի դերը փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման գործում, հատկապես այն ժամանակաշրջանում, երբ այդ երկրների ինտեգրվածությունը ԵՄ հաստատություններում դեռ շատ խորը չէր: Ծատ հաճախ, ՓՄՁ-ները զարգացող երկրներում տնտեսական առաջընթացի շարժիչ ուժն են համարվում:

Ինչպես արդեն նշել էինք, ԿԱԵ տարածաշրջանը բնութագրվում է օտարերկրյա \$ինանսական հաստատությունների գերակայությամբ: Միևնույն ժամանակ փոքր և միջին բիզնեսը հիմնականում ապավինում է բանկային \$ինանսավորմանը, ուստի կարևոր է հասկանալ, թե որքանով է գործող համակարգը արդյունավետ՝ ՓՄՁ-ների գործունեությունը խթանելու միջոցով ԿԱԵ երկրներում երկարաժամկետ տնտեսական աճ ապահովելու համար: ՓՄՁ-ների զարգացման վրա օտարերկրյա բանկերի ներկայության ազդեցության հարցի շուրջ գոյություն ունենումի քանի հակասական տեսություններ:

Որոշ տնտեսագետներ կարծիք են հայտնում, որ օտարերկրյա \$ինանսական հաստատությունները հակված չեն ՓՄՁ-ներին վարկ տրամադրել, քանի որ ի տարբերություն տեղական \$ինանսական հաստատությունների, տեղական շուկայի մասին նրանց տեղեկացվածությունը ավելի ցածր է: Մինչդեռ տեղական հաստատությունները

միջանձնային հարաբերությունների, ՓՄՁ-ների սեփականատերերի և ղեկավարների հետանմիջակակապերի, ինչպես նաև ոչ պաշտոնական (ինսայդերական) տեղեկատվություն տիրապետման շնորհիվ ակտիվորեն տրամադրում են վարկային միջոցներ<sup>90</sup>:

Միևնույն ժամանակ, էմպիրիկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օտարերկրյա բանկերի մուտքը այլ պետությունների շուկադրական ազդեցություն է ունենում ՓՄՁ-ների զարգացման վրա: Կենտրոնացված կազմակերպական կառուցվածք ունեցող օտարերկրյա բանկերը \$ինանսավորում են ՓՄՁ-ները՝ օգտագործելով այնպիսի \$ինանսական և վարկային պրոդուկտներ, ինչպիսիք են ակտիվների վրահիմնված բանկային վարկերը (asset-based lending), \$ակտորիսզը, լիզինգը, հիմնական միջոցների ձեռք բերման համար վարկերը և վարկային սթորիսզը:

Թվում է, թե օտարերկրյա բանկերը ՓՄՁ-ներին \$ինանսավորում են նույն չափով, որքան տեղական բանկերը, բայց միևնույն ժամանակ կիրառում են տարբեր տեսնիկական և կազմակերպչական մոտեցումներ: Այս պնդումը փաստարկելու համար կարևոր է վերլուծել մի կողմից ՓՄՁ-ներին տրամադրվող վարկերում օտարերկրյա բանկերի ներգրավվածությունը, և տրամադրված վարկի տեսակները, ինչպես նաև ՓՄՁ-ների վարկավորման տեսնունդիական և կազմակերպչական կառուցվածքը:

Կարևոր է դիտարկել այն օտարերկրյա բանկերի դուստրերի գործունեությունը, որոնք ինչպես

<sup>90</sup> A.E. Pawlowska, A.W. Mullineux, "Financing small and medium-sized enterprises in Poland, 1984-1994: an empirical investigation of credit rationing", Economic Performance and Financial Sector Reform in Central and Eastern Europe, 1999, (p 32-34)

առանձին երկրի, այնպես էլ ԿԱԵ ողջ տարածաշրջանի շուկայի զգալի մասն են զբաղեցնում: Պետք է նշել, որ այդ բանկերի մեծ մասը մտնում են նաև առաջատար գլոբալ բանկերի ցանկի մեջ:

**Աղյուսակ 13.** Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում գործող խոշորագույն օտարերկրյա բանկերը (2018):<sup>91</sup>

#	Բանկի անվանումը	Ճագման երկիրը
1	HSBC Holdings	Մեծ Բրիտանիա
2	BNP Paribas	Ֆրանսիա
3	Credit Agricole Group	Ֆրանսիա
4	Deutsche Bank	Գերմանիա
5	Banco Santander	Իսպանիա
6	Barclays PLC	Մեծ Բրիտանիա
7	Societe Generale	Ֆրանսիա
8	Groupe BPCE	Ֆրանսիա
9	Lloyds Banking Group	Մեծ Բրիտանիա
10	ING Group	Նիդերլանդներ

շարունակումը

Օտարերկրյա բանկերը ձեռք բերելով տարածաշրջանային խոշոր բանկերը՝ վերջիններից «Ժառանգեցին» նաև դրանց վարկային պորտֆելները և, հետևաբար, կենտրոնացան կամ խոշոր կորպորատիվ հաճախորդների կամ մանրածախ բիզնեսի վրա, եթե ձեռք բերված բանկը խնայողական բանկ էր: Այլ բանկեր, ինչպես ABN AMRO, HVB Group, Raiffeisen Bank-ը ԿԱԵ երկրներ ներթափանցել են հիմնականում նոր բանկ ստեղծելու միջոցով («Greenfield»): Սակայն, անկախ տարածաշրջան մուտք գործելու մեթոդներից, 90-ականների ողջ ընթացքում օտարերկրյա բանկերի դուստրերի

<sup>91</sup> Banks around the World “Top European Banks”- <https://www.relbanks.com/top-european-banks/assets>

գործունեության մեջ ՓՄՁ-ների ֆինանսավորումը նշանակալի տեղ չէր զբաղեցնում: Բայց հետագայում պարզվեց, որ այդ երկրներում շուկայական տնտեսության որոշակի մակարդակի զարգացման հետ մեկտեղ օտարերկրյա կապիտալով բանկերը սկսեցին ակտիվ ֆինանսավորել փոքր և միջին բիզնեսը:

Միևնույն ժամանակ ING Bank-ը, որը սկզբում կենտրոնացած էր միայն գլոբալ ընկերություններին սպասարկելու վրա, սկսեց ընդլայնել իր գործունեության ոլորտը և ներկայումս ֆինանսավորում է ոչ միայն ՓՄՁ-ներին, այլև մանրածախ ծառայություններ է մատուցում ԿԱԵ երկրներում գտնվող անձանց: Անշուշտ, վերագրային կորպորացիաները, որոնք գործունեություն են ծավալում զարգացող երկրներում, կարևոր հաճախորդներ են վերագրային բանկերի համար: Այնուամենայնիվ, միևնույն ժամանակ Յու.Ն.Կարիայում ING Bank-ի դուստր ձեռնարկությունը կենտրոնանում է մասնավորապես ՓՄՁ-ների վարկավորման վրա, ինչը արտացոլվում է այս երկրում ՓՄՁ-ների քանակի զգալի աճով:<sup>92</sup>

Թվում է, թե ԿԱԵ երկրներում դուստր բանկերի ռազմավարական դիրքի վերափոխումը հոգևոր ՓՄՁ-ներին, առաջին հերթին պայմանավորված է խոշոր կորպորացիաների վարկավորման դաշտում մրցակցության ավելացումով, իսկ երկրորդ հերթին, օտարերկրյա դուստր ձեռնարկություններին կողմից համեմատաբար ոչ թափանցիկ ՓՄՁ-երի նկատմամբ ռիսկերի կառավարման համակարգի բարելավումով:

<sup>92</sup> Форст О.С. «Иностранные Банки в Экономиках Стран Центральной и Восточной Европы», Москва, 2011 г. (сс 43-55)

Խոսելով տնտեսության զարգացմանը գոլգահեն խոշոր ընկերություններին տրամադրվող վարկային շուկայում մրցակցության ավելացման հետևանքներին՝ նշենք, որ դրանք բերում են տոկոսադրույքի մարժայի կոմիսիոն վճարների նվազեցում, ինչը ստիպում է բանկերին սկսել ՓՄՁ-ներին նույնպես վարկավորել: Այդպես են ժամանակին գործել Erste Bank-ը, SEB-ը և Swedbank-ը, որոնք ժամանակի ընթացքում դարձան ՓՄՁ-ների գործունեության հիմնական ֆինանսավորողները: Հետագայում նույն փորձը կրկնեցին նաև տարբեր երկրներում «գրոյից» դուստր բանկեր ստեղծած HVP-ն և Raiffeisen Bank-ը:

Դիսկերի կառավարման համակարգի բարելավումը հիմնականում տեղի է ունեցել տվյալների հավաքագրման և վերլուծության նոր մեթոդների մշակման և ներդրման շնորհիվ: Դուստր բանկերում նոր համակարգերի արդյունավետ ինտեգրման նպատակով կազմակերպվել են վերապատրաստման ծրագրեր ու դասընթացներ. տեղացի աշխատակիցներին ուղարկել են մայր ընկերություն, կամ մայր ընկերությունը մասնագետներ է ուղարկել դուստր ընկերության երկիր՝ թրեյնինգներ կազմակերպել ու համար:

Անշուշտ, ասվածի հետ պետք է հիշել, որ ԿԱԵ երկրների ազգային տնտեսություններին մեջ նույն ժամանակահատվածում փոքր և միջին բիզնեսի զարգացման համար ստեղծվել են ընդհանուր բարենպաստ պայմաններ: Իրավական դաշտը, հաշվապահական հաշվարկների համակարգը աստիճանաբար համապատասխանեցվել են միջազգային չափանիշներին, ինչը նվազեցրել է ՓՄՁ-ների ֆինանսավորման հետկապված ռիսկերը:

Այս պիսոյով, Կենտրոնական և Արևելյան  
Եվրոպայի երկրների փորձը ցույց է տալիս, որ  
օտարերկրյա բանկերի առկայությունը դրական  
ազդեցություն է ունենում փոքր և միջին  
բիզնեսի զարգացման վրա, ինչպես նաև ընդունող  
տնտեսությունների ընդհանուր  
ինստիտուցիոնալ զարգացման վրա՝  
նորարարությունների, նոր տեխնոլոգիաների  
փոխանցման միջոցով: Այսպես, Յամաչխարհային  
բանկի տնտեսագետների կողմից կատարված  
ուսումնասիրությունների արդյունքում  
պարզվել է, որ բանկային հատվածի  
սեփականության ձևավորման փոփոխությունները  
(ոչ ռեզիդենտների մասնաբաժնի ավելացում),  
ինչպես նաև ենթակառուցվածքների  
ֆինանսավորման (փոքր և միջին բիզնեսի  
թափանցիկության բարձրացում)  
գործընթացներում փոփոխությունները  
բարելավում են փոքր և միջին բիզնեսի  
վարկավորման տեխնոլոգիական կառուցվածքը:  
Բացի այդ, Թիլբուրգի համալսարանի և  
Յամաչխարհային բանկի մասնագետների կողմից  
կատարած համատեղ ուսումնասիրությունը ցույց  
է տվել, որ ԿԱԵ երկրներում օտարերկրյա բանկերի  
դուստրերի կողմից ՓՄՁ-ների տրամադրված  
վարկերի մեջ ժամկետանց վարկերի մասնաբաժնի  
ընդհանուր ավելի փոքր է, քան ազգային բանկերի կողմից  
տրամադրված վարկերի մեջ<sup>93</sup>:

Յայաստանի տնտեսության զարգացման մեջ  
օտարերկրյա բանկերի մասնակցությունը  
ուսումնասիրելիս չենք կարող անտեսել  
միջազգային ֆինանսական  
կազմակերպություններին: Յայաստանի

<sup>93</sup> A.N. Berger, G.F. Udell "A more complete conceptual framework for financing of small and medium enterprises",  
World Bank Policy research Working Paper No. 3795, World Bank, Washington D.C. 2005 (p 42-44).

Հանրապետության արտաքին \$ինանսավորման գործում միջազգային \$ինանսական կազմակերպությունների դերը զգալի է եղել: Ինչպես նշեցինք վերևում, այդպիսի \$ինանսական կազմակերպություններից վերցրած վարկերը արդեն բավական մեծ թիվ են կազմում և նախընտրելի է, որ միջոցները ներգրավեն մասնավոր աղբյուրներից: Սակայն մասնավոր աղբյուրներից եկող \$ինանսավորումը բավարարե հիմնականում մասնավոր ծրագրերի իրականացման համար: Գոյություն ունեն ծրագրեր, որոնց արդյունքները ոչ շուկայական են և որոնց իրականացմամբ պետք է զբաղվի հիմնականում պետությունը: Այդ ծրագրերը առաջին հերթին վերաբերում են ենթակառուցվածքներին, ինչպես նաև կարող են վերաբերել կրթությանը և առողջապահությանը: Այդ պարագայում պետությունը միջազգային \$ինանսական կազմակերպությունների օժանդակության կարիք է ունենալու, որոնք հաճախ են ցածր տոկոսադրույքով վարկավորում զարգացող երկրներում իրականացվող ծրագրերը:

Այդ ծրագրերի վարկավորումը նպաստում է պետական պարտքի աճին, որի հիմնական մասնակիցները մի կողմից ՀՀ կառավարությունը և ՀՀ Կենտրոնական բանկն են, մյուս կողմից՝ միջազգային \$ինանսական կազմակերպությունները:

Այսպես, ՀՀ \$ինանսների նախարարության տվյալներով, 2018 թ. սկզբի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է \$6.775 մլրդ, որի մեջ կառավարության արտաքին վարկերը և փոխառությունները կազմել են \$4 մլրդ, իսկ

Վեներոնական բանկի արտաքին պարտքը կազմել է \$601.5 մլն<sup>94</sup>:

Կառավարող թյան արտաքին պարտքի մեծ մասը բաժին է ընկնում միջազգային կազմակերպություններին: Ամենախոշոր վարկատուներն են Չարգացման միջազգային ընկերակցությունը, և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը, որոնք միասին մտնում են Համաշխարհային բանկի խմբի մեջ, և Ասիական զարգացման բանկը: Օտարերկրյա պետություններին բաժին է ընկնում կառավարող թյան արտաքին պարտքի մոտ 20%-ը, այդ թվում Ռուսաստանին՝ 6.3% ճապոնիային՝ 5.9%-ը, Գերմանիային՝ 4.1%-ը:

Ընդհանուր առմամբ կառավարող թյան արտաքին պարտքը 2018թ. սկզբին բաշխված էր հետևյալ կերպ:

**Աղյուսակ 14. ՀՀ կառավարող թյան գործող արտաքին վարկերի գծով \$ինսական ցուցանիշները 01.01.2018թ-ի դրոն թյամբ<sup>95</sup>**

<b>Ընդհանուր պարտքի մեջ %-ը</b>		
<b>ՎՉՄԲ</b>	Վերակառուցման և Չարգացման	15.7%

<sup>94</sup> ՀՀ ֆինանսների նախարարություն/ ՀՀ կառավարության գործող վարկերի գծով ֆինանսական ցուցանիշները 01.01.2018թ- դրությամբ:

<sup>95</sup> Կազմվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների վրա:




	Միջազգային Բանկ	
<b>2ՄԸ</b>	Չարգացման Միջազգային Ընկերակցություն	28.1%
<b>ՎԶԵԲ</b>	Վերականգնման և Չարգացման Եվրոպական Բանկ	0.6%
<b>ԵՆԲ</b>	Եվրոպական Ներդրումային Բանկ	3.0%
<b>ԳԶՄՅ</b>	Գյուղատնտեսության Չարգացման Միջազգային Հիմնադրամ	1.7%
<b>ՕՄԶՅ</b>	ՕՊԵԿ-ի Միջազգային Չարգացման Հիմնադրամ	1.4%
<b>ԱԶԲ</b>	Ասիական Չարգացման Բանկ	16.0%
<b>ԱՄՅ</b>	Արժույթի Միջազգային Հիմնադրամ	2.8%
<b>ԵՄ</b>	Եվրամիություն	1.9%
<b>ԵԶԲ (ՎԶԵՅ)</b>	Եվրասիական Չարգացման Բանկ (Կայունացման և Չարգացման Եվրասիական Հիմնադրամի կառավարիչ)	7.6%
<b>Գերմանիա (ՎՎԲ)</b>	Գերմանիայի Վերականգնվող վարկերի բանկ	4.1%
<b>ՌԴ</b>	Ռուսաստանի Դաշնություն	6.3%
<b>ԱՄՆ</b>	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	0.5%
<b>Ֆրանսիա</b>		3.0%
<b>Ճապոնիա</b>		5.9%
<b>Աբու Դաբիի Չարգացման Հիմնադրամ</b>		0.1%
<b>Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ</b>		0.6%
<b>ԿԲՍ Բանկ (Բելգիա)</b>		0.1%
<b>Ռայ ֆայզն Բանկ (Ավստրիա)</b>		0.2%
<b>Էռստե Բանկ (Ավստրիա)</b>		0.3%
<b>Ընդամենը</b>		100.0%

Սրան պետք է ավելացնել նաև ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը, որը նույն ժամանակաշրջանի համար կազմել է \$601.5 մլն, որից \$158.5 մլն կազմել են ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկերը:

ՀՀ կառավարության պարտքի արժույթային կառուցվածքում առյուծի բաժինը պատկանում է ԱՄՆ դոլարին և SDR-ին (Յատուկ փոխառության իրավունքին): Որոշակի կշիռ ունեն նաև եվրոն և ճապոնական իենը:

**Գծապատկեր 31. Կառավարության պարտքի արժույթային կառուցվածքը<sup>96</sup>**



Միջազգային և ֆինանսական կազմակերպությունները պարտադիր չէ, որ մասնակցեն միայն պետական, հասարակական ծրագրերի ֆինանսավորմանը: Դրանք կարող են մասնակցություն ունենալ նաև առևտրային բանկերի գործունեության մեջ կոնկրետ ոլորտների ֆինանսավորմանը նպաստելու կամ բաժնետոմսերի գնման միջոցով: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների ներկայությունը հայկական բանկերում սկիզբ է առել անկախությունից ի վեր և ժամանակի ընթացքում անընդհատ փոփոխությունների է ենթարկվում:

ՎՉԵԲ-ն և ԱՉԲ-ն միասին վերահսկում են Հայաստանի ամենախոշոր բանկի՝ Ամերիայի բաժնետոմսերի առավել քան 30%-ը:

<sup>96</sup> ՀՀ ֆինանսերի նախարարություն/ Ամսական ամփոփ տեղեկագիր ՀՀ կառավարության պարտքը/ 2018թ. փետրվարի 28-ի դրությամբ

Համաշխարհային Բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիան 2006 թ. դարձել է Ինտերբանկի բաժնետեր՝ ձեռք բերելով վերջինիս բաժնետոմսերի 10%-ը: Բանկը համագործակցում է Միջազգային ֆինանսական կորպորացիայի հետ՝ փոքր և միջին ձեռնարկու թյուրևներին և հիփոթեքային շուկայի վարկավորման ծրագրերի շրջանակներում: 2008 թ. Ինտերբանկի բաժնետեր է դարձել DEG-ը՝ ձեռք բերելով վերջինիս բաժնետոմսերի 13.5%-ը: KfW բանկային խմբի անդամ հանդիսացող DEG կազմակերպությունը ֆինանսավորում է մասնավոր ընկերություններին ներդրումները զարգացող և անցումային շրջանում գտնվող երկրներում: Ինտերբանկը համագործակցում է ՎԶԵԲ-ի հետ՝ միկրո, փոքր և միջին ձեռնարկու թյուրևներին վարկավորման և առևտրի խթանման երաշխիքային ծրագրերի շրջանակներում: 2015թ. EBRD-ն դարձավ Ինտերբանկի բաժնետեր՝ ձեռք բերելով վերջինիս բաժնետոմսերի 22.7%-ը և իրականացնելով \$20 մլն կապիտալ ներդրում:

Հայ Էկոնոմբանկը 2000թ. պայմանագիր է կնքել Վերականգնման և զարգացման Եվրոպական Բանկի (EBRD) հետ \$1 մլն սահմաններում վարկային ծրագրի իրականացնելու նպատակով՝ դառնալով հայաստանյան առաջին բանկը, որն այդպիսի պայմանագիր է ստորագրել: Հայ Էկոնոմբանկը ՎԶԵԲ-ի Առևտրի խթանման Ծրագրի շրջանակներում 2004թ. ստացել է \$500,000 երաշխիքային վարկ: Հետագայում Հայ Էկոնոմբանկի ու ՎԶԵԲ-ի միջև կնքվել է պայմանագիր, որով մեկնարկել է Բանկի կանոնադրական կապիտալում ՎԶԵԲ-ի մասնակցությունը: Արդյունքում ՎԶԵԲ-ի մասնակցությունը Բանկի կանոնադրական

կապիտալ ու մ կ ա գ մ ե լ է 25%+1 ք ա ժ ն ե տ ո մ ս : Բ ա ն կ ի և IFC-ի մ ի ջ և կ ն ք վ ե լ է վ ա ր կ ա յ ի ն պ ա յ մ ա ն ա գ ի ր , ո ր ի հ ա մ ա ձ ա յ ն ք ա ն կ ի ն հ ա տ կ ա գ վ ե լ է \$2 մ լ ն վ ա ր կ : Յ ա յ Է կ ո ն ո մ ք ա ն կ ի և Կ ո մ ե ր ց ք ա ն կ ի մ ի ջ և կ ն ք վ ե լ է պ ա յ մ ա ն ա գ ի ր , ո ր ի հ ա մ ա ձ ա յ ն ք ա ն կ ի ն հ ա տ կ ա գ վ ե լ է \$2 մ լ ն վ ա ր կ : 2007թ . Յ ա յ Է կ ո ն ո մ ք ա ն կ ի և Վ Չ Ե Բ -ի մ ի ջ և կ ն ք վ ե լ է ս ի ն դ ի կ ա գ վ ա ծ վ ա ր կ ի պ ա յ մ ա ն ա գ ի ր , ո ր ի հ ա մ ա ձ ա յ ն հ ա մ ա շ խ ա ր հ ա յ ի ն ճ ա ն ա չ ու մ ու ն ե ց ո ղ վ ե ց \$ ի ն ա ն ս ա կ ա ն հ ա ս տ ա տ ու թ յ ու ն ն ե ր ՝ Վ Չ Ե Բ -ը , գ ե ր մ ա ն ա կ ա ն C o m m e r z b a n k A G , ա վ ս տ ր ի ա կ ա ն R a i f f e i z e n Z e n t r a l b a n k O s t e r r e i c h A G և B a n k A u s t r i a C r e d i t a n s t a l t A G , հ ն դ կ ա կ ա ն S t a t e B a n k o f I n d i a , թ ա յ վ ա ն յ ա ն L a n d B a n k o f T a i w a n , ք ր ի տ ա ն ա կ ա ն F B N B a n k ( U K ) L i m i t e d ք ա ն կ ե ր ը Յ ա յ Է կ ո ն ո մ ք ա ն կ ի ն ե ն տ ր ա մ ա դ ր ե լ \$15 մ լ ն ս ի ն դ ի կ ա գ վ ա ծ վ ա ր կ , ո ր ը պ ե տ ք է ու ղ ո ղ վ ե ր փ ո ք ր և մ ի ջ ի ն ք ի զ ն ե ս ի վ ա ր կ ա վ ո ր մ ա ն ը : Ա յ դ ժ ա մ ա ն ա կ ա շ ր ջ ա ն ի ց ս կ ս ա ծ մ ի ն չ և օ ր ս Յ ա յ Է կ ո ն ո մ ք ա ն կ ը մ շ տ ա պ ե ս վ ա ր կ ա վ ո ր վ ու մ է տ ա ր ք ե ր մ ի ջ ա գ գ ա յ ի ն ք ա ն կ ե ր ի և վ ա ր կ ա յ ի ն կ ա գ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն ն ե ր ի կ ո ղ մ ի ց , ի ր կ ո ղ մ ի ց Յ Յ - ու մ փ ո ք ր և մ ի ջ ի ն ք ի զ ն ե ս ը վ ա ր կ ա վ ո ր ե լ ու ն պ ա տ ա կ ո վ :

Ե թ ե կ ա ռ ա վ ա ր ու թ յ ու ն ը կ ա մ հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ո լ ո ր տ ն ե ր ու մ ն ե ր գ ր ա վ վ ա ծ հ ա ս ա ր ա կ ա կ ա ն կ ա գ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն ն ե ր ը ծ ր ա գ ր ե ր մ շ ա կ ե ն ո լ ո ր տ ն ե ր ը \$ ի ն ա ն ս ա վ ո ր ե լ ու հ ա մ ա ր , հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ք ա ն կ ե ր ը հ ն ա ր ա վ ո ր ու թ յ ու ն կ ս տ ա ն ա ն ի ր ե ն ց մ ի ջ ա գ գ ա յ ի ն գ ո ր ծ ը ն կ ե ր ն ե ր ի ն ն ե ր գ ր ա վ ե լ ա յ դ ծ ր ա գ ր ե ր ը \$ ի ն ա ն ս ա վ ո ր ե լ ու գ ո ր ծ ու մ : Կ ա ր ծ ու մ ե ն ք , ո ր մ ի ջ ա գ գ ա յ ի ն \$ ի ն ա ն ս ա կ ա ն կ ա գ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն ն ե ր ի ց ն մ ա ն ա տ ի պ վ ա ր կ ե ր ի ք ա ն ա կ ի ա վ ե լ ա ց ու մ ը , կ ա խ վ ա ծ է լ ի ն ե լ ու տ ն տ ե ս ա կ ա ն ա կ տ ի վ ու թ յ ա ն ց ու ց ա ն ի շ ն ե ր ի դ ր ա կ ա ն տ ե ղ ա շ ա ր ժ ե ր ի ց , ո ր ո ն ք տ ե ղ ի կ ու ն ե ն ա ն , ե թ ե պ ա հ պ ա ն վ ի վ ե ր ն ու մ ն շ վ ա ծ « շ ղ թ ա յ ի » ա շ խ ա տ ա ն ք ի ս կ գ ր ու ն ք ը :

Բայց ինչ վերաբերում է պետության կողմից վերցրած վարկերին, ապա դրանք պետք է մինիմալացվեն մինչև այն հրատապ ծրագրերի հրագործման \$ինանսավորումը, որոնք մասնավոր սուբյեկտները ի վիճակի չեն լինի պատշաճորեն հրագործել: Այսպես, խոսքը վերաբերում է ոչ միայն ենթակառուցվածքների շինարարության և վերանորոգման աշխատանքների հետ կապված արտաքին \$ինանսավորմանը: Մեր կարծիքով հատուկ ուշադրության պետք է արժանանա վերականգնվող էներգիայի արտադրմանը ուղղված ծրագրերի \$ինանսավորումը, քանի որ փորձը ցույց է տալիս, որ դրանց բարձր ծախսատարողությունը և արդյունավետության դանդախ ապահովումը հաճախ դուրս են մղում շուկայական մոտիվացիան, թողնելով միայն բարոյական մոտիվացիան:

Այսպես, կարող ենք ամփոփել, որ Յայաստանի տնտեսական զարգացման գործում բավական մեծ դեր է խաղալու բանկային համակարգը, անկախ սեփականատերերի ռեզիդենտությունից: Այդ բանկերը, բացի սեփական միջոցներից, կարողանալու են նաև միջոցներ ներգրավել միջազգային \$ինանսական կազմակերպություններից տնտեսության տարբեր ոլորտները վարկավորելու նպատակով: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ այն հրավիճակում, որում գտնվում է Յայաստանը, զարգացման ամենաարագ և արդյունավետ ճանապարհը գլոբալ կամ տարածաշրջանային բանկերի ներգրավումն է՝ ի դեմս նրանց հիմնած դուստրբանկերի:

## **ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Կատարված հետազոտություններից մեկն ք  
եզրակացնում ենք, որ .

- Գլոբալացումը անշրջելի է, բայց այն  
միանշանակ ընդունվող երևույթ չէ, և նրա  
առաջացրած հետևանքների շուրջի հայտ են  
եկել բավական լուրջ հակասություններ:  
Գոյություն ունեն տարբեր կարծիքներ այն  
հարցի շուրջ, թե որոնք են գլոբալացման

վերջնական նպատակները :  
 Տարակարծություններ է առաջացնում նաև այն  
 հարցը, թե ինչպես է պետք լավագույնս  
 օգտագործել գլոբալացումը, դրանից  
 մաքսիմալ դրական արդյունք ստանալու  
 համար: Մեր կարծիքով գոյություն ունի  
 երկու տեսակի գլոբալացում:

- **Գլոբալ բանկերի դերի բարձրացումը**  
 համաշխարհային տնտեսության մեջ կապված է  
 բանկային և արդյունաբերական կապիտալի  
 կենտրոնացման հետ, որը ժամանակակից  
 տնտեսական հարաբերությունների մեջ  
 հանդիսանում է կարևոր միտում: Գլոբալ  
 տարածում և գլոբալ ազդեցություն ունեցող  
 բանկերի ակտիվության բարձրացումը  
 հետզհետե ավելի ակտուալ դարձրեց դրանց  
 կարգավորման հարցը: Մտավախություններ էին  
 առաջանում, որ այն բանկերը, որոնք ավելի  
 ազդեցիկ են, քան աշխարհի երկրների մեծ մասը,  
 հետզհետե անկառավարելի են դառնում և  
 արդյունքում կարող են վարել ռիսկային  
 քաղաքականություն՝ վստահ լինելով, որ  
 իրենց երկրների կառավարությունները  
 խնդիրների առաջացման դեպքում միշտ  
 պատրաստ կլինեն օգնության հասնել մեծ  
 բանկերին, քանի որ ընդունված կարծիք էր՝  
 վերջիններիս կործանումը ավելի վատ  
 հետևանքների է բերելու (To big to fail): Արդյունքում  
 դա հանգեցրեց 2008 թ. համաշխարհային  
 \$ինանսատնտեսական ճգնաժամին, որի  
 արդյունքում գլոբալ բանկերի  
 առաջատարների ցուցակում որոշ տեղաշարժեր  
 տեղի ունեցան (ոչ շատ զգալի): Սակայն  
 ամենակարևոր հետևանքն այն է, որ թե՛  
 ազգային, թե՛ գլոբալ մակարդակում սկսեցին

քայլեր ձեռնարկվել գլոբալ բանկերի  
գործունեությունը կարգավորելու  
նպատակով:

- Մտահոգություններ են ստեղծվում, որ  
միջազգային բանկերի ակտիվացումը  
հանգեցնելու է զարգացող երկրների  
կախվածություն աճին զարգացած երկրներից:  
Բայց միջազգային բանկերից խուսափելուց  
առաջ պետք է հիշել, որ այդ բանկերը և դրանց  
ծագման երկրները բավական հաճախ իրար  
մրցակիցներ են հանդիսանում, և  
կախվածությունից խուսափելու հիմնական  
միջոցը երկրի ներսում մրցակցություն համար  
հարմարավետ միջավայր ստեղծելն է: Փորձը  
նանցույց է տալիս, որ երկրները, անկախ իրենց  
ներսում գործող օտարերկրյա բանկերի  
քանակից, պահպանում են իրենց  
ինքնիշխանությունը, քանի դեռ ունեն  
ազգային կենտրոնական բանկ և վարում են  
ինքնուրույն դրամավարկային  
քաղաքականություն: Իսկ  
ինքնիշխանությունից ոչ թե զրկվում են, այլ  
այն իրենց կամքով են սահմանափակում:
- Տնտեսական հաջողություններ և անկումներ  
կարող են լինել ինչպես օտարերկրյա բանկերի  
մեծ, այնպես էլ փոքր ներկայություններ  
երկրներում: Տարբեր երկրների փորձը ցույց է  
տալիս, որ երկրի տնտեսական զարգացումը  
առաջին հերթին կախված է այդ երկրի վարած  
տնտեսական քաղաքականությունից: Իսկ  
օտարերկրյա բանկերը բոլոր տեսակի  
տնտեսական քաղաքականությունների  
դեպքում ստանձնում են գործընթացների  
արագացուցիչ դերը: Լավ տնտեսական  
քաղաքականության դեպքում օտարերկրյա



բանկերը նպաստում են տնտեսական աճին, իսկ վատ տնտեսական քաղաքականություն դեպքում, ընդհանրապես, նպաստում են ճգնաժամերի առաջացմանը և իրավիճակի վատթարացմանը:

- Հայաստանը, չունենալով մեծ շուկա, բնական պաշարներ, խոշոր արդյունաբերական արտադրություն և կամ բարենպաստ աշխարհագրական դիրք, ստիպված է օտարերկրյա կապիտալը ներգրավել միայն իր տնտեսության կառուցվածքային և ինստիտուցիոնալ որակը բարձրացնելով: Ուսումնասիրելով Հայաստանի բանկային համակարգը, հիմնականում օգտվելով միջազգային կառույցների կողմից հրապարակած տվյալներից և այն համեմատելով տնտեսության այլ ճյուղերի հետ՝ կարող ենք ասել, որ այն մեր երկրի տնտեսության ամենակայացած կառույցն է և անընդհատ բարեփոխումների ենթարկվում միջազգային չափանիշներին համապատասխանելու համար: Սակայն ՀՀ բանկային համակարգը մինչ օրս չի խաղացել այն դերը, որը պետք է խաղար. տնտեսության շարժիչ ուժի դերը: Պատճառը տնտեսության թերուղյակներն են, որոնք շտկելու պարագայում միայն հնարավոր կլինի խոսել բանկային համակարգի զարգացմանը նոր թափահաղորդելու մասին:

- Հայաստանի բանկային համակարգում օտարերկրյա մասնակցությունը, ի տարբերություն բազմաթիվ այլ երկրների, ունի իր առանձնահատկությունները: Եթե դիտարկում ենք այլ երկրների բանկային համակարգերում օտարերկրյա բանկային կապիտալի ներկայությունը, ապատեսուսում ենք, որ հիմնականում դակապված է միջազգային կամ

գլոբալ տարածում ունեցող բանկային  
 ինստիտուտների հետ: Յայաստանի պարագայում,  
 ինչպես ասացինք, ունենք այլ դեպք. մեր երկրի  
 օտարերկրյա հանդիսացող 10 բանկերից միայն  
 չորսն են հանդիսանում միջազգային բանկերի  
 դուստրեր, և դրանց ակտիվների համախառն  
 բաժինը բանկային ընդհանուր ակտիվների մեջ  
 մեծ տեղ չի զբաղեցնում: Յատուկ  
 ուշադրության է արժանի Յայաստանի  
 բանկային համակարգի գործունեության մեջ  
 առանցքային դեր խաղացող հայկական  
 սփյուռքը: Քանի որ մնացած վեց օտարերկրյա  
 բանկերում, որոնք որևէ օտարերկրյա  
 բանկային ինստիտուտի դուստր չեն  
 հանդիսանում, հիմնական շահառուները  
 հանդիսանում են սփյուռքահայեր:  
 Սփյուռքահայ ներդրողների առավելությունն  
 այն է, որ նրանք պատրաստակամ են  
 ներդրումներ իրականացնել Յայաստանի  
 բանկային համակարգում՝ չնայած առկա  
 թերություններին: Իսկ թերություններից  
 հիմնականը կապիտալի ցածր  
 շահույթաբերությունն է, որը մենք հաշվել  
 ենք՝ օտարերկրյա բաժնետերերի բաժին  
 շահույթը հարաբերելով կանոնադրական  
 կապիտալում օտարերկրյա կապիտալի  
 մեծության վրա:

$$\text{ՇՔ}_{04} = (\text{Շահույթ}_{04} / \text{Կապիտալ}_{04}) \times 100$$

Իսկ ցածր շահույթաբերությունը, ինչպես  
 տեսանք վերևում հիմնականում  
 պայմանավորված է տնտեսության, այլ ոչ թե  
 բանկային համակարգի թերություններով:

- Ուսումնասիրություններից նաև պարզ  
 դարձավ, որ բանկային համակարգում հաճախ

ազգային խնդիրները կարող են դառնալ միջազգային: Իսկ ազգայինից միջազգայինի վերածող խնդիրների համար անհրաժեշտ են միջազգային, համապարփակ լուծումներ: Բացի ճգնաժամերի տարածման խնդրից, բանկային գործունեության միջազգային մակարդակում կարգավորման անհրաժեշտությունը բխում է այն փաստից, որ բանկերի համար գնալով ավելի է բարդանում գործունեություն ծավալել առանց օտարերկրյա համագործակցության: Այդ պատճառով էլ անհրաժեշտություն է առաջանում «խաղի» միասնական կանոններ հաստատել: Այդպիսի կանոնները գլոբալ մակարդակում հաստատում է Բանկային վերահսկողության բազելյան հանձնաժողովը: Սամենք համարում ենք բնական գլոբալացման ձևերից մեկը: Սրան հակադրվում է տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների կողմից հաճախ իրականացվող բանկային համակարգերի ինտեգրման և կենտրոնացման քաղաքականությունը: Սամեր կարծիքով արհեստական գլոբալացման արտահայտման ձևերից է: Ընդհանուր առմամբ լրիվ չհակադրվելով տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների գաղափարին՝ կարծում ենք, որ անդամակցող երկիրը պետք է իր համար նախօրոք «կարմիր գծեր» անցկացնի, որոնց հատումը արդեն վտանգելու է երկրի ինքնիշխանությունը: Այդպիսի «կարմիր գծեր» կարելի է համարել միասնական կենտրոնական բանկի և միասնական արժույթի ստեղծման գաղափարը:

- Ընդհանուր գարգացման գործընթացի արագացումը մեծապես կախված է տնտեսությունների ական հատված - բանկային համակարգ կապը

ապահովող շղթան: Յամաձայն այդ շղթայի աշխատանքի տրամաբանության տնտեսական ակտիվության ավելացումը բերելու է բանկային համակարգի ակտիվացմանը և հետևաբար շահույթների ավելացմանը: Դա իր հերթին նպաստելու է բանկային համակարգում օտարերկրյա ներդրումների ավելացմանը, ինչը իր հերթին նպաստելու է տնտեսական ակտիվության նոր ավելացման, և այդպես շարունակ:

Իրավիճակը բոլոր կողմերից բավական մանրամասն ուսումնասիրելով՝ մեր կարծիքով անհրաժեշտ են մի քանի գործողություններ, որոնք իրագործելով հնարավոր կլինի գլոբալացումը և հատկապես բանկային գործունեության գլոբալացումը օգտագործել մեր երկրի օգտին: Այդ գործողություններն են.

1. Ապահովել տնտեսությունում ազատ մրցակցությունը, օրենքի առջև բոլոր սուբյեկտների հավասարությունը և մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը:
2. Կենտրոնական բանկի միջոցով ապահովել բանկերի կարգապահությունը: Դա հիմնականում կատարվում է միջազգային կարգավորումների չափանիշներին համապատասխանելով միջոցով:
3. Մասնակցել միջազգային, տարածաշրջանային համագործակցությունների ծրագրերին, բայց չգնալ չափից ավելի խորը ինտեգրման: Խոսքը գնում է ԵԱՏՄ շրջանակներում երկրների բանկային համակարգերի համագործակցությանը և ընդհանուր կարգավորումների հաստատմանը: Դա

ընդհանուր առմամբ ընդունելի է մինչև այն պահը, երբ ԵԱՏՄ-ն կսկսի շարժվել ԵՄ օրինակով՝ ձգտելով ընդհուպ մինչև միասնական կենտրոնական բանկի և միասնական արժույթի ստեղծմանը: Մեր կարծիքով դա հակասելու է բնական գլոբալացման սկզբունքին, որը մենք դեռ ամենակարգից ընդունելի ենք որպես դրական երևույթ: Մեր համոզմամբ, բնական գլոբալացման գործընթացները աշխարհը հետզհետե վերածում են մեկ տարածաշրջանի: Այդ պարագայում, փոքր տարածաշրջանային միավորումներում չափից շատ ինտեգրումը սահմանափակելու է երկրի հնարավորությունները համագործակցելու աշխարհի մյուս մասերում գտնվող երկրների հետ: Թե՛ բանկային, թե՛ ընդհանուր տնտեսական համագործակցության հարցերում Հայաստանի Հանրապետությունը պետք է հրաժարվի ավանդական ԵԱՏՄ - ԵՄ երկընտրանքից և աշխարհը սկսի դիտարկել որպես մեկ գլոբալ տարածաշրջան, որտեղ միջազգային համագործակցության հիմք են կազմելու երկրների միջև երկկողմանի համաձայնագրերը: Դա նպաստելու է մեր հիմնական խնդրի՝ ազգային տնտեսության և հետևաբար պետության ինքնիշխանության պահպանմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. THE WORLD BANK-Merchandise exports (current US\$). -<https://data.worldbank.org/indicator/TX.VAL.MRCH.CD.WT>
2. Truthout "Noam Chomsky on Globalization, Inequality and Political Alienation", 2016 -  
<https://truthout.org/articles/noam-chomsky-on-globalization-inequality-and-political-alienation/>
3. J. E. Stiglitz "Globalization and Its Discontents", W.W. Norton & Co, New York – London, 2002, (pp 53-88).
4. R. Findlay, K. H. O'Rourke "Power and Plenty: Trade, War, and the World Economy in the Second Millennium", Princeton University Press, Princeton and Oxford, 2007, (pp 24-37).
5. J. Frieden "Global Capitalism: Its Fall and Rise in the Twentieth Century", W.W. Norton & Co, New York - London, 2006, (pp 6-12).
6. B. Eichengreen "Globalizing Capital: A History of the International Monetary System-Second edition", Princeton University Press, Princeton, 2008, (pp 29-42).
7. P. Singer "One World: The Ethics of Globalisation", Yale University Press, New Haven & London, 2016, (pp 222-226).

